Սա առաջին դեպքը չէ, որ ԱՄՆ իշխանությունը Հայաստան է արտաքսում ՀՀ քաղաքացիների: Դա սկսվեց անցած տարվա սկզբից, երբ ԱՄՆ նախագահի պաշտոնը զբաղեցրեց Դոնալդ Թրամփը, որի նախընտրական խոստումներից մեկն էլ ապօրինի ներգաղթի կասեցումն էր, երկիրը ներգաղթյալներից ազատելը, ու նա միանգամից հրահանգեց անցնել գործի:

Կարդացեք՝ էջ 5

Թրամփը բարձրացրեց հայ քրիստոնյա բանտարկյալների հարցը՝ օգոստոսյան հանդիպումներին: Այդ հայտարարությունը կարեւոր է: Մենք պարտավոր ենք ապահովել, որ այդ խոսքերը վերածվեն իրական մարդկանց իրական պաշտպանության: Մենք հատուկ վերաբերմունք չենք խնդրում, խնդրում ենք, որ հայերի կյանքը հավասարապես արժեւորվի:

Կարդացեք՝ էջ 6

Սա թալամն է, թե՞ ոչ: Ձեւական առումով՝ բանկերը գործում են օրենքի շրջանակում: Պայմանագրերը ստորագրված են, տոկոսները նշված են, ոչ ոք զենքով չի ստիպում: Բայց սոցիալական առումով՝ երբ մարդը տարիներով աշխատում է միայն տոկոս փակելու համար, երբ վարկը չի օգնում դուրս գալ աղքատությունից, այլ խորացնում է այն:

Կարդացեք՝ էջ 8

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 8 (4123), 30 հունվար, ուրբաթ, 2026

Հրապարակ

www.hraparak.am

Ընտրություններին ընդառաջ, Նիկոլ Փաշինյանը մտադիր է ոչ միայն քաղաքական հակառակորդների վախը բռնել քրեական հետապնդումներով, այլեւ՝ սեփական թիմակիցներինը: Իշխանական աղբյուրների փոխանցմամբ, իրավապահները նյութեր են նախապատրաստում ՔՊ-ական պատգամավոր Հայկ Սարգսյանի դեմ, որին ՔՊ վարչությունը չընդգրկեց նախընտրական ցուցակի թեկնածուների մեջ: Այդ որոշումը Շիշ բռնողը բողոքարկեց, բայց կրկին մերժվեց, որից հետո Սարգսյանը սպառնալից ակնարկներ արեց, թե անուններ կտա՝ ով եւ ինչու է պայքարել իր դեմ: Երեկ Փաշինյանը, անդրադառնալով նրան, հայտարարեց. «Ես չեմ կարծում, որ այդ քննարկումների բովանդակությունը հանրային դարձնելուն ուղղված գործողությունները բխում են պարոն Սարգսյանի շահերից: Այդ պատմությունն ընդամենը մեկ բանի մասին է, որ ՔՊ-ն իր անդամների ոչ կանոնավոր, կոռուպցիոն տեսանկյունից խնդրահարույց գործողությունները չի հանդուրժելու»: Որքան էլ չեն հանրայնացնում, բայց սրանից պարզ հնարավոր չէր ասել, եւ հեռու չէ այն օրը, երբ նա կհայտնվի մեղադրյալի աթոռին: Այդ ժամանակ Փաշինյանը կհիմնավորի իր զինակցին զոհաբերելու անհրաժեշտությունը՝ փորձելով տպավորություն ստեղծել, թե չի հանդուրժում կոռուպցիոն երեւույթները: Ի դեպ, գրել էինք, որ Հովիկ Աղազարյանին մեղսագրվող կաշառքի գործով շոշափվում է նաեւ Հայկ Սարգսյանի անունը: Գործով վկաները հեռախոսային զրույցի ընթացքում նրա մասին են խոսել, ասել, որ նախկինում ոչխարների արտահանման գործն ամբողջությամբ Հայկի ձեռքին էր:

Հատուկ իրենց համար սահմանած հունվարի 27-ի՝ զոհերի հիշատակի օրը Փաշինյանի եւ նրա թիմակիցների՝ Եռաբլուր այցի ընթացքում լրագրողները ֆիքսել էին դիպուկահարների ներկայությունը, որոնք զենքով հսկում էին Եռաբլուր սրբավայրում Նիկոլ Փաշինյանին եւ ապահովում նրա անվտանգությունը, թեեւ այնտեղ սովորաբար իրենց զավակների, ամուսինների շիրիմներին այցի եկած մարդիկ են, ովքեր մշտապես այնտեղ են լինում, որովհետեւ զրկվել են նորմալ կյանքով ապրելու իրավունքից: Մեզ պատմեցին, որ դիպուկահարների մասին տեղեկանալով, զոհված զինվորների մի խումբ ծնողներ շրջել են եւ հայտնաբերել նրանց ու դեմառդեմ կանգնելով զինված ուժայիններին, ուղղակի շան լափ են թափել նրանց գլխին՝ աշխարհի ամոթանքը տվել, ասելով՝ ո՞ւմ եք դուք պաշտպանում՝ «Եռաբլուրը բազմապատկած դավաճանի՞ն», եւ ումի՞ց եք պաշտպանում՝ որդեկորույս ծնողների՞ց: Ոչ իրենց կամքով Եռաբլուրում հայտնված տղաները գլխիկոր եւ լռելյայն լսել են ու ծպտուն չեն հանել:

Միճչեւ ո՞ւր

Ցինիզմի, անամոթության, օրենքը տրորելու ժամանակներում ենք ապրում: Երբ դատարանը վարույթ ընդունեց Մասյացոտնի թեմի առաջնորդ, կարգալույծ արված տիրադավ արքեպիսկոպոս Գեւորգ Սարոյանի դիմումը, շատերը զարմացան, որովհետեւ ակնհայտ է, որ սա վարչական, աշխատանքային կամ քաղաքացիական վեճ չէ, եւ նման վարույթն ինքնին Սահմանադրության խախտում է՝ Եկեղեցու եւ պետության տարանջատման դրույթի ոտնահարում: Բայց դատարանը Գեւորգ Սարոյանի հայցը վարույթ ընդունելով չբավարարվեց՝ հայցի ապահովման միջոց կիրառեց, պարտադրելով Վեհափառին՝ վերականգնել նրա կարգավիճակը: Կարծես թե Գեւորգ Սարոյանը մի վարչության պետ էր, որին անարդարացիորեն ազատել էին աշխատանքից՝ Աշխատանքային օրենսդրության խախտմամբ, դատարանն էլ արդարություն է վերականգնում: Մարդիկ սկսեցին բացատրել, որ սա աբսուրդ է, պետության օրենքների ու հոգեւոր աշխարհի օրենքների անթույլատրելի խախտում: Օրինակներ էին բերում, որ չի կարող ՀՀ դատարանը որոշումներ կայացնել Ամենայն հայոց կաթողիկոսի որոշումների մասով, դա նույնն է, որ վաղը Ֆրանսիայում ՀԱԵ թեմի առաջնորդին վերականգնելու որոշում կայացնի եւ այլն: Զայն բարբառո հանապատի: Բայց ամենաուշագրավն այն է, որ դատարաններն ու քննչականները որոշել են այս «ձեռքբերումների» վրա էլ կանգ չառնել: Երեկ էլ տեղեկացանք, որ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության հաղորդման հիման վրա քրեական վարույթ են հարուցել կաթողիկոսի դեմ՝ դատարանի որոշումը չկատարելու համար: Սա նշանակում է օրենքի, օրինականության, ողջամտության մասին բոլոր հիշեցումները ոչ միայն ադեկվատության սահմանները խախտած «առաջնորդին» լսելի չեն, այլ նաեւ իրավապահ կառույցներին ու դատական իշխանությանը: Սա նշանակում է, որ երկիրն ուղղակի գժանոցի են վերածել:

«Մեսիջը շատ պարզ է՝ եկեղեցի, Արարատ, մեր խորհրդանիշներից չենք հրաժարվում»: Ռոբերտ Քոչարյանը երեկ իր ասուլիսում այսպես մեկնաբանեց թիկունքին փակցրած մեծ պաստառը՝ Արարատ լեռան եւ Խոր վիրապի պատկերով: «Մեր տարածաշրջանում, փոքր երկրի համար ազգային ինքնությունն այն ցեմենտն է, որը պետականությունն ամուր է պահում: Եթե ուզում ես պետականությունը քանդվի, այդ ինքնությունը թուլացրու: Սա աքսիոմատիկ մոտեցում է, եւ ես չէի կարող ուրիշ կարգի հարաբերություններ ձեւավորել Եկեղեցու հետ: Չի եղել որեւէ տարաձայնություն»,- իր եւ Մայր Աթոռի, Վեհափառի հետ փոխհարաբերություններին անդրադառնալով՝ ասաց նա: Նկատեցինք, որ սառնասիրտ ու դաժան մարդու համբավ ունեցող Քոչարյանն ակնհայտորեն սենտիմենտալ էր դարձել՝ Եկեղեցու, ազգային ինքնության հարցերին անդրադառնալիս: Նա չթաքցրեց, որ այս իշխանություններն այնքան արեցին, որ անգամ «իր նման մարդը» ասուլիսի հետնանկար է ընտրել Արարատի, Խոր վիրապի պատկերները:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ 7 ՊՈՐՏԸ ՍՏՈՒԳԵԼ ԵՆ

Այսօր Նիկոլ Փաշինյանի նվագակցությամբ կազմակերպված դիսկոտեկն է կայանալու: Այն, մեր տեղեկություններով, տեղի կունենա «Պալլադիում հոլլ» համալիրում: Նախօրեին Փաշինյանը թիմակիցների, մասնավորապես՝ Վահագն Ալեքսանյանի հետ այցելել էր Ջրվեժում գտնվող այդ ռեստորանը, զննել տարածքը, որտեղ հատուկ բեմահարթակ են կառուցել նորահայտ երաժշտի համար, որը պետական գործերը թողած՝ թմբուկ է զարկում: Ինչպես հայտնի է, Նիկոլ Փաշինյանն ամիսներ շարունակ հարվածային գործիքներով նվագել է սովորել, ապա իր բենդն է ստեղծել՝ «Վարչաբենդ» անունով, եւ քաղաքացիներին հունվարի 30-ին հրավիրել է դիսկոտեկի՝ առաջարկելով նախապես գրանցվել: Իհարկե, մասնակիցները հիմնականում յուրայիններն են, որոնց յոթը պորտն ուսումնասիրել են, նոր գրանցել՝ միջոցառմանը մասնակցելու թույլտվություն տալով: Ի դեպ, այս ռեստորանում էր ԱԺ նախագահը հունվարի 5-ին նշել իր 45-ամյակը: Հավանաբար, իշխանական վերնախավի դուրը շատ է եկել այս ռեստորանի մթնոլորտը, կամ ռեստորանի տերերը հատուկ «ջանք» են դրել, որ հայտնվեն իշխանական էլիտայի սիրելի վայրերի ցանկում:

ԲԱՆԱԿ

ՈՐՊԵՍԶԻ ԶԵՆՔ ԳՆԵԼՈՒ ԻՄԱՍՏԸ, ԵԹԵ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆԳԱՄ ՆԱՀԱՆՋԻ ՀՐԱՄԱՆ Է ՏԱԼՈՒ

«Վերջին տարիներին հսկայական քանակությամբ ժամանակակից սպառազինություն եւ ռազմական տեխնիկա է ձեռք բերվել, այնպիսի որակի եւ պարամետրերի, որ մեր բանակը երբեք չի ունեցել: Սրա համար ծախսվել են մեծ ֆինանսական միջոցներ, որովհետեւ ձեռք բերված տեխնիկան թանկարժեք է եւ քանակական: Բայց նաեւ պետք է պատասխան հնչի մի շատ կարեւոր հարցի. իսկ ինչո՞ւ այս նույնը չի արվել 2018, 2019, 2020, 2021, 2022 թվականներին»,- գրել է Նիկոլ Փաշինյանը ՀՀ զինված ուժերի կազմավորման 34-րդ տարեդարձի առթիվ շնորհավորական ուղերձում եւ ինքն էլ պատասխանել իր հարցին. «Սպառազինություն եւ տեխնիկայի վաճառքի պոտենցիալ ունեցող մեր գրեթե բոլոր միջազգային գործընկերները քաղաքավարի մերժում էին Հայաստանի Հանրապետությանը զենք վաճառել՝ երկու հիմնական պատճառաբանությամբ.

1. Վստահ չէին, որ այդ զենքը չէր տեղակայվի ՀՀ միջազգայնորեն ճանաչված տարածքից դուրս:

2. Վստահ չէին, որ այդ զենքերի գաղտնի պարամետրերը հասանելի չէին դառնա ՀԱՊԿ-ին, որին ՀՀ-ի անդամակցությունը նույնպես խոչընդոտ էր նման գործարքներ կնքելու համար:

Իսկ ՀԱՊԿ գործընկերները 2022 թվականի սեպտեմբերի դրությամբ հրաժարվում էին կատարել ՀՀ անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը երաշխավորելու մեր նկատմամբ ունեցած պայմանագրային պարտավորությունները: Հրաժարվում էին նաեւ մատակարարել հարյուր միլիոնավոր դոլարի սպառազինություն եւ տեխնիկա, ինչի համար վճարումները Հայաստանի Հանրապետությունն արդեն կատարել էր: Սա գոյաբանական սպառնալիք էր Հայաստանի Հանրապետության համար, եւ ակնհայտ էր, որ մեր պետականությունը վերացնելու, մեր ինքնիշխանությունը զրոյացնելու որոշում է կայացված:

Այս օրհասական վտանգը հաղթահարվեց երկու վճռական իրադարձության արդյունքում. 2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում քառակողմ ֆորմատով ձեռք բերված քաղաքական պայմանավորվածության, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունն ու Ադրբեջանի Հանրապետությունը միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը ճանաչում են 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա, եւ ՀԱՊԿ-ում ՀՀ անդամակցությունը սառեցնելու»:

Զրուցել ենք ռազմական փորձագետ **Կարեն Վրթանեսյանի** հետ:

- Փաշինյանը փաստացի հերթական անգամ մեղադրում է Արցախին եւ ՀԱՊԿ-ին, որ Արցախի գոյությունն ու ՀԱՊԿ անդամ լինելը մեզ խանգարել են, որ ժամանակակից զենք, զինտեխնիկա ձեռք բերենք, եւ քանի որ այժմ չկա Արցախը, եւ ՀԱՊԿ-ի հետ հարաբերությունները սառեցված են, ինքը գերժամանակակից զենք է գնել: Նրա խոսքերում կամ ճշմարտության հատիկ, ի վերջո՝ ինչո՞ւ է այժմ զենք գնում, եթե Ադրբեջանի հետ եղբայրական հարաբերություններ է հաստատել, խաղաղություն, ամեն օր շնորհակալություն են հայտնում Իլհամին եւ ոչինչ չեն անում, որ զինված ազերիները դուրս գան մեր սուվերեն տարածքից:

- Ես անհիմաստ եմ համարում այդ մարդու տարօրինակ, երբեմն անհեթեթության հասնող հայտարարությունները: Նա քանի դեռ իշխանության է, այնքան անելու է նման հայտարարություններ, որոնց մի մասը գուցե կիսաճշմարտություն է, մի մասը կոնտեքստից կտրված է, մի մասը՝ ուղղակի հորինված: Օրինակ՝ 11 հազար դասալիքի մասին էին խոսում, կամ՝ Իսկանդերը պայթել է տասը տոկոսով, կամ՝ մենք փակել ենք 80-ականների զենքի ամոթալի էջը, այն դեպքում, երբ 80-ականների զենք ունենալն ամոթալի բան չէ բնավ, ողջ աշխարհի զգալի մասում կիրառվում են 80-ականների, ավելին՝ 70-ականների, իսկ Ուկրաինայում՝ մինչեւ անգամ 1930-ականների թնդանոթներ եւ գնդացիրներ: Այս մարդու հայտարարությունները հիմնականում էպոտաժ են, իրականությանը մոտ չեն եւ աղավաղված են:

- Բայց հիմա ասում է՝ ես որակյալ զենք եմ գնել, իսկ Արցախը եւ ՀԱՊԿ-ը մեզ խանգարում էին այդ գործում:

- Նախեւառաջ, զենք գնելն ինքնանպատակ չէ: Զենքը պետք է գնել կոնկրետ խնդիրներ լուծելու համար: Օրինակ, Փաշինյանը մեծ աղմուկ բարձրացնելով՝ գնեց «Սու 30» կործանիչներ, որոնք այդպես էլ չաշխատեցին պատերազմի ժամանակ, ինչպես տեսնում ենք՝ հիմա էլ չեն օգտագործվում: Հարց է առաջանում. մենք ինչո՞ւ ենք մտնում նման ծախսերի տակ, եթե Հայաստանի օդային պաշտպանիչը չեն պատրաստվում զարգացնել: Ակնհայտ է դառնում, որ այս ամենն արվում է գովազդի համար կամ գուցե ինչ-որ ռուսաստանյան գործընկերների (ՍՈՒ-երի դեպքում՝ Հ. Գ.) լավություն անելու համար, սակայն ոչ Հայաստանի անվտանգության: Դրանք ոչ մի կերպ Հայաստանի պաշտպանության համար չօգտագործվեցին: Կասկածելի հայտարարություններ են անում, խոսում են այս կամ այն գերժամանակակից զենքը գնելու մասին, լավ, ո՞րն է այդ զենքերի իմաստը, եթե հերթական անգամ նահանջի հրաման է տրվելու, եթե թույլ չեն տալու այդ զենքերը գործնականում կիրառել: Կան բազմաթիվ նրբություններ, օրինակ, սպառազինությունների համար անձնակազմի պատրաստում, զինամթերքի մատակարարում եւ այլն: Պատերազմական իրավիճակներում այդ հրթիռները գեղեցիկ ձեւով վերջանում են, ո՞նց են հասցնելու մատակարարել՝ էն սարի համար, որի վրա ողջ տարին ձյուն է.... էդ սարը կարող է Ադրբեջանը գրավել, հրետանին դնել սարի վրա ու հանգիստ կտրել Սյունիքի ճանապարհը: Հարց է առաջանում. հնդկական հրետանու արկերն ինչպե՞ս են հասցնելու Հայաստան, եթե միակ կապող ճանապարհն Իրանն է. այստեղ էլ, բացի այն, որ ճանապարհը կարող է խնդիր լինել, մեկ այլ հարց եւս կա՝ Իրանի ներքին իրավիճակը: Թե չէ, կարող են բոլորն էլ գալ ու գլուխ գովել, բայց ո՞րն է վստահությունը: 2020 թվականից այս կողմ լայնածավալ գեթ մեկ զորավարժություն չի արվել: Եթե դու գիտես, որ պատերազմի վտանգ կա, ինչո՞ւ չես անում նորմալ զորավարժություն: Եթե ոչինչ չի արվում, իմաստ չկա զենք գնելու մասին խոսել: Ի դեպ, ասեմ մի բան եւս. ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված՝ աշխարհում զենքի մեծ դեֆիցիտ կա, թե՛ ԽՍՀՄ-ից մնացած պաշարներն են սպառվում, թե՛ նոր սպառազինությունը: Աշխարհաքաղաքական իրավիճակը լարված է ու անկայուն, մի շարք երկրներ փորձում են զինվել, այն ժամանակ, երբ Հայաստանն ուներ հնարավորություն՝ իր կորուստները վերականգնելու, խոսքը հենց 20-21 թվականների մասին է, ոչինչ չի արվել, հիմա ի՞նչ են ուզում ասել, ինչի՞ համար են այդ թանգարանային նմուշները, որոնք հայտնի չէ, թե ինչ համակարգերի հետ կարող են աշխատել, ո՞ւմ է պետք:

- Մինչեւ 2018 թվականը ինչպե՞ս էր զենք ձեռք բերվում:

- Զենքի գնումը շատ բարդ, երկար տարիներ տեւող պրոցես է: Զենքն այֆոն չէ, որ երբ ուզես, գնես, անգամ այֆոնը նոր դուրս եկած ժամանակ չես կարողանում հեշտությամբ գնել: Սպառազինություն ձեռք բերելու համար պայմանագրեր են կնքվում կամ չեն կնքվում, եւ այսպես շարունակ: ՀԱՊԿ անդամ լինելու հանգամանքը գուցե արեւմտյան զենք գնելու համար է խանգարում, սակայն նույն Արեւմուտքը հիմա զենքի դեֆիցիտ ունի, նույն ԱՄՆ-ն չի հասցնում պահանջարկի հետեւից գնալ: Այնպես որ, եկեք Նիկոլ Փաշինյանի դեմագոգիկ զառանցանքներին լուրջ չվերաբերվենք:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊՈԼԻԷԹԻԼԵՆԻ ԴԵՄ «ՊԱՏԵՐԱԶՄԻՑ» ՏՈՒԺԵՑ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Կառավարությունը շրջակա միջավայրի նախարար Համբարձում Մաթեւոսյանի շուրթերով խոստովանեց, որ մինչեւ 50 միկրոն հաստության տոպրակների վաճառքի արգելքն օգուտ չի տվել, ուստի 2027-ից կարգելվի պոլիէթիլենային տոպրակների շրջանառությունը Հայաստանում: Սրա վերաբերյալ քննարկումները սկսվել են դեռ նոյեմբերին: Որոշվել էր, որ արդեն այս տարվանից արգելվեն պոլիէթիլենային տոպրակները, բայց նախարարությունը չկարողացավ գործը գլուխ բերել ու նոր ժամկետ նշանակեց՝ 2027 թ. հունվարի 1-ը:

Հիշեցնենք. այդ արգելքը մտցնելու համար նույն՝ շրջակա միջավայրի նախարարությունը 2021-ին բուռն քննարկումներ էր անցկացնում, էկոլոգիական ճառեր ասում, թե իբր եթե բարակ տոպրակներն արգելեն, մարդիկ հաստ տոպրակները դեն չեն նետի եւ բնությունը չեն աղտոտի: Իրականում դրանից օգտվեցին խանութների տերերը, եւ 22 թ. հունվարի 1-ից խանութները սկսեցին քաղաքացիներին հաստ տոպրակներ վաճառել: Բայց դրանք ավելի մեծ վնաս են բնությանը, եւ հիմնականում մարդիկ դրանք դեն են նետում: Այժմ մեզ ասում են՝ կներեք, սխալվել ենք, ու որոշել են նոր փորձանք բերել՝ առհասարակ արգելելով պոլիէթիլենի շրջանառությունը:

«Իրազեկ եւ պաշտպանված սպառող» ՀԿ նախագահ **Բաբկեն Պիպոյանը** կանխատեսում է, որ պոլիէթիլենային տոպրակները շրջանառությունից հանելուց հետո մարդիկ խանութում ավելի շատ գումար են թողնելու, քան հիմա, որովհետեւ թղթի տոպրակն անհամեմատ ավելի թանկ է, քան պոլիէթիլենը: «Կրկին տուժելու է քաղաքացին, որովհետեւ նման փոփոխություն անելուց առաջ նախ պետք է ստեղծեն ենթակառուցվածք, այսինքն՝ որոշեն նրանց, ովքեր շուկան այդ թղթե տոպրակներով կապահովեն: Ասենք, տրամադրեն անտոկոս վարկ, ազատեն ԱԱՀ-ից, այլ արտոնություններ, նպաստավոր պայմաններ ստեղծեն, որ ենթակառուցվածքն աշխատի: Դուք պատկերացնո՞ւմ եք, թե ինչ ծավալի կտորե ու թղթե տոպրակներ մենք պետք է արտադրենք ու բերենք: Այսինքն՝ առանց հստակ մեխանիզմների դու, ինչպես ռուսներն են ասում, «կուստառնի» աշխատանք ես կատարում, կտրում ես գլուխը, երբ այն ցավում է, առանց բուժել փորձելու»,- ասում է Պիպոյանը:

Կառավարության վատ աշխատանքի դիմաց վճարում է հասարակությունը: «Մենք՝ որպես հասարակություն, ստիպված ենք լինում տուժել այն պարտավորությունների ձեռքը, որոնք ստանձնում է մեր իշխանությունը միջազգային կառույցների առաջ: Ասենք, բնապահպանական բարեփոխումների անվան տակ որոշակի ծրագրեր են բերում Հայաստան, բայց քանի որ չեն ունենում արդյունք, ստիպված, որպես արդյունքի բավարարման մեխանիզմ, որեւէ իրավանորմ են ընդունում՝ ցույց տալու, որ՝ տեսեք, մենք գնացինք ծայրաստիճան քայլի: Դեռ նախորդ որոշումով, երբ պոլիէթիլենային տոպրակները դարձրին վճարովի, արդեն պարզ էր, որ որեւէ արդյունք չի լինելու: Միակ արդյունքը հարկային մուտքերի ավելացումն էր»:

Բնապահպանական խնդիր չլուծվեց, կառավարության սխալի պատճառով տուժեց քաղաքացին, որը շատ չաշխատող օրենքներ է տեսել վերջին շրջանում: Դեղատներում արգելեցին հակաբիոտիկների վաճառքը, բայց դրանք ինչպես վաճառվում էին, այնպես էլ վաճառվում են: Ռեստորանների սեղաններից աղը հավաքեցին, հետո խոստովանեցին, որ սխալվել են: Անհամար օրինակներ կարող ենք բերել:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԱՍՈՒԼԻՍ

ՌԵՄԲՈ Է ԵՂԵԼ, ԳԻՔՈՐ Է ԴԱՌԵԼ, ՀԻՄԱ «ԷՍՏԻ ՀԱՄԵՑԵՔ» Է ԱՆՈՒՄ

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը երեկ հերթական ասուլիսն էր հրավիրել, որի գլխավոր նպատակը թերեւս ընդդիմադիր դաշտում առաջնորդության պահպանումն ու բոլորից առաջ նախընտրական գործընթացներին իր մասնակցության ձեւաչափի եւ այլ հարցերի պատասխանելն էր: Այսպիսով, ամռանը՝ հունիսի 7-ին սպասվող հերթական համապետական ընտրություններին Ռոբերտ Քոչարյանը կրկին կմասնակցի Հայ հեղափոխական դաշնակցության հետ դաշինքով: Թեեւ ընդգծեց, որ նոր, թարմ դեմքեր էլ կներգրավվեն թիմում:

«Այո, ես համարում եմ, որ բարենպաստ պայմաններ են՝ նախընտրական խոշոր բլոկներ ձեւավորելու համար»,- մեր հարցին ի պատասխան՝ ասաց երկրորդ նախագահը, հիշեցնելով, որ նախորդ ընտրություններին մասնակցել է մոտ 25 քաղաքական ուժ. «Հիմա հնարավորություն կա, որ մասնակցեն 8-10-ը, ոչ ավել: Ես տեսնում եմ հնարավորություն, որ ընդդիմադիր դաշտը կարող է գնալ ընտրությունների 3, առավելագույնը՝ 4 խոշոր բլոկներով»:

Նա այս անգամ ավելի կոշտ էր իր գնահատականներում: «Նիկոլ Փաշինյանն իրեն համարում է մարդ, որն իրավունք ունի վերանայել հայ ժողովրդին եւ փոխել նրա ինքնությունը: Գուցե նա իրեն համարում է Քրիստոսի «զապասկա», չգիտեմ: Սակայն նման վարքագիծը լայն հնարավորություններ է բացում ընդդիմության միավորման համար»,- ասաց երկրորդ նախագահը: Անդրադառնալով հարցին, թե ով է առաջնորդելու իրենց դաշինքը, Քոչարյանն ասաց, որ փետրվարի սկզբին սոցհարցում են անցկացնելու եւ դրանից ելնելով՝ որոշելու են, թե ով է առաջնորդը լինելու. «Եթե սոցիոլոգիան ցույց տա, որ ամենից շատ ձայներ բերողը ես եմ, ուրեմն ես եմ մնալու: Եթե հայտնվել է մեր դաշինքում մեկը, որ կարող է ավելի մեծ ձայներ ապահովել, ուրեմն նա է լինելու: Ես շատ ուրախ կլինեմ, որ դա ես չլինեմ, շատ մեծ բեռից կազատվեի: Այս վիճակում պայքարից փախչելը կհամարեի դասալքություն»:

Քոչարյանն ասաց նաեւ, որ այսօր լրատվամիջոցներում հրապարակված սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ դեռ՝ «այո, ես եմ առավել հավանական թեկնածուն, որը կգլխավորի ցուցակը»: «Այսօրվա դրությամբ այդպես է, բայց վերջնական որոշում կայացնելու համար պետք է ինքս հասկանամ, թե ինչքանով է սա արդյունավետ լինելու ամբողջ թիմի համար: Մենք գնում ենք ընտրությունների ավելի լավ դիրքերից, քան դա եղել է 2021-ին»,-ասաց նա՝ հավելելով, որ հարցումը պատվիրելու են պրոֆեսիոնալ սոցիոլոգիական ընկերության: Բայց Քոչարյանը շեշտեց, տարբերակներով լինելու է, ուղղակի հարցն այն է, թե Հայաստանի Հանրապետության բովանդակությունն ինչպիսին է լինելու: Հայաստանը լինելու է առանց Սյունիքի՞ կամ Հայաստանը լինելու է առանց Հայ առաքելական եկեղեցի՞: Իմ տպավորությամբ, այս ընտրություններն ունիկալ են լինելու, որովհետեւ լինելու են Հայաստանի Հանրապետության էության մասին: Իրեն թվում է, թե եթե մենք մեր ամբողջ ազգային բովանդակությունը մի կողմ դնենք, եթե Թուրքիան, Ադրբեջանը մեզ սկսեն ընկալել որպես ամորֆ մի ժողովուրդ, որը ո՛չ անցյալ ունի, ո՛չ ներկա, մեզ չեն դիտելու որպես սպառնալիք ու մեզ հանգիստ են թողնելու: Ո՛չ, հանգիստ չեն թողնելու, դու այդ վիճակում լավ աշխարհաքաղաքական ուտելիք ես դառնալու՝ կուլ տալու համար: Միջազգային հարաբերություններն այդպես չեն աշխատում: Այդ վիճակում դու բարեկամ էլ չես ունենալու, դու աշխարհաքաղաքական մուրացկան ես դառնալու: Ռեմբո է եղել, Գիքոր է դառել, հիմա էլ Գիքորի վիճակում է, «էստի համեցեք» է անում»:



Հարցին՝ ունե՞ք վերլուծություն, թե ինչու են գործող իշխանությունները Ձեզնից վախենում, որ կարող եք վերադառնալ իշխանության, Քոչարյանը հեգնանքով պատասխանեց. «Շատ են սիրում»: Նա համաձայն չէ, որ ինքն ու իր թիմն այժմ ավելի վատ դիրքերում են, քան 2021 թվականին, եթե, իր խոսքով, Փաշինյանին հաջողվեց պատերազմի պարտությունն այն ժամանակ Ռուսաստանի, նախկինների մանդատը չեմ վերցրել: Եթե մեր քաղաքական ուժն առաջին տեղը չունենա, ես որեւէ հավակնություն չեմ ունենալու»,- կրկին պնդեց երկրորդ նախագահը: Ինչ վերաբերում է, թե հետո ով կլինի վարչապետը միասնական ընդդիմության հաղթանակից հետո, ապա, ըստ Քոչարյանի, կա շատ պարզ տարբերակ՝ ով ավելի մեծ տոկոս է հավաքում, նրա առաջնային իրավունքն է՝ վարչապետ առաջադրել:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՆԱ ԱՍԱՑ ԱՅՆ, ԻՆՉԸ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԹԱՔՑՆԵԼ

ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանն իր ասուլիսում երեկ անդրադարձավ ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին քաղաքական հարցերին: Նա ասաց, որ Հայաստանը պետք է անի ամեն ինչ՝ գերտերությունների շահերի բախման կետում չհայտնվելու համար՝ «հմուտ նավապետը փոթորիկի ժամանակ իր նավն օվկիանոս չի հանում՝ չվտանգելով ո՛չ նավը, ո՛չ անձնակազմը»: Նշեց, որ ԱՄՆ-ն ապամոնտաժում է այն աշխարհակարգը, որը հենց ինքն էլ ձեւավորել է: Խոսեց մեր խորհրդանիշներից՝ եկեղեցի, Արարատ, որից չի կարելի հրաժարվել: Ինչ վերաբերում է ընտրություններին՝ հնարավոր է ձեւավորել խոշոր նախընտրական 3-4 բլոկ, որոնք կարող են համագործակցված աշխատել: TRIPP-ը, ըստ նրա, հայ-ամերիկյան պրոյեկտ է՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի համար, եւ դա մեծ սպառնալիք է դառնալու, եթե չընդլայնվի, չընդգրկի Չինաստանն ու Ռուսաստանը, եւ չփարատվեն Իրանի մտահոգությունները: Ասաց, որ ՀԱՊԿ-ից ինքն էլ ունի որոշակի հիասթափություն: Լավատեսություն հայտնեց, որ պատկերն ընտրություններում ավելի բարենպաստ է լինելու ընդդիմության համար, եւ շեշտեց, որ սոցհարցումներով են որոշելու իրենց դաշինքի առաջին համարին: Բավականին հավակնոտ հայտարարություն արեց. «Ինձնից լավ ոչ մեկ չի կարող երկիրը հանել այս վիճակից: Ես հենց սրա համար եմ մասնակցելու ընտրությանը: Եթե մեր քաղաքական ուժն առաջին տեղը չի լինի, ես որեւէ հավակնություն չեմ ունենալու՝ վարչապետ դառնալ... Ես չեմ գնալու նախարար աշխատելու կամ մանդատ վերցնելու՝ պատգամավոր դառնալ»:

Խոսեց նաեւ Եկեղեցու դեմ արշավի մասին. «Եթե որեւէ մեկն ինձ ասեր, որ գալու է մի պահ, ու մենք ունենալու ենք այս պատկերը, ես կասեի, որ հարց տվողը հոգեկան հիվանդ է... Փաշինյանը եկել է մի կարգախոսով, որ ժողովրդին սիրում է: Հետո պարզվեց, որ փողն է սիրում, ոչ թե՝ ժողովրդին: Եթե ժողովրդին սիրեր, թոշակառուների վիճակն այսպիսին չէր լինի»:

Քաղաքագետ **Բենիամին Մաթեւոսյանին** հարցրինք՝ ո՞րն էր նախագահի ասուլիսի հիմնական մեսիջը: «Ռոբերտ Քոչարյանի հերթական ասուլիսը եկավ ապացուցելու, որ «Հայաստան» դաշինքը մասնակցելու է հերթական ընտրություններին, լինելու է ընդդիմության կարեւոր քաղաքական գործոններից մեկը, իսկ Քոչարյանը՝ ինքը, իր մասնակցության ֆորմատը գալիք ընտրություններում տարբեր կերպ է ընկալում: Սակայն ակնհայտ է, որ նա անձամբ է մասնակցելու պրոցեսներին՝ ներքաղաքական առումով: Արտաքին քաղաքականության առումով էլ կուզենայի ընդգծել, որ նա ասաց այն, ինչը փորձում են թաքցնել հասարակությունից: Խոսքը Թրիփ նախագծի մասին է: Տնտեսական առումով պրոյեկտ Հայաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ՝ միանշանակ դրական է ցանկացած տնտեսական պրոյեկտի իրականացման դեպքում, բայց եթե կա անվտանգության կոմպոնենտ, ապա դու պետք է այնպես անես, որ տնտեսական պրոյեկտը չդառնա անվտանգության լրջագույն խնդիր, իսկ Իրանի եւ ԱՄՆ-ի հարաբերությունների սրման փուլում չափազանց կարեւոր է այս հարցերի համար զսպիչ մեխանիզմներ առաջ բերելը: Նա փաստացի կրկնեց նախկինում արած իր հայտարարությունն այն մասին, որ Թրիփը պետք է երկարացվի, ինչպես նաեւ՝ ռուսական կողմին, որպես անվտանգության երաշխավոր, պետք է ներգրավել պրոցեսներում: Ես այդտեղ կավելացնեի նաեւ հետեւյալը՝ մտահոգություն ունի նաեւ Իրանը, քանի որ ԱՄՆ-ի ներգրավվածությունն անմիջապես իր սահմանին կարող է անկառավարելի ռիսկեր առաջացնել: Մեր միջպետական պայմանագիրն այնպես է կազմված, որ դու գլոբալ առումով չես կարող որեւէ մեկին առանձին հատվածից հանել, մնացած հատվածներում թողնել: Հանուն Թրիփի դու հանում ես ողջ ռուս սահմանապահներին ողջ երկայնքից, ստացվում է, որ Թուրքիայի առաջ մենք բացում ենք մեր անվտանգության բոլոր դռները: Սա, ըստ էության, անվտանգային առումով առաջարկ էր երկրորդ նախագահի կողմից: Մյուս կարեւոր կետը սահմանադրական փոփոխությունների մասին էր: Ես եւս կարծում եմ, որ դրա փոփոխությունն անհրաժեշտ է, սակայն ոչ այն օրակարգով, որն առաջ է քաշում Թուրքիան, մասնավորապես՝ Անկախության հռչակագրից հրաժարումը: Խոսքն այն մասին է, որ այս սահմանադրական համակարգն այլանդակ ձեւով մարդուն դարձնում է քաղաքական մոնստր: Այդ համակարգը պետք է փոխվի: Կիսանախագահական մոդելը մեզ համար այս փուլում նախընտրելի է»,- ասում է Մաթեւոսյանը:

Բայց այս աստիճանի պրոռուսական լինելը չի՞ խանգարում Ռոբերտ Քոչարյանին: «Խնդիրն այն է, որ ցանկացած անձի, սուբյեկտի կարելի է քննադատել, բայց քննադատել հանուն քննադատության՝ ոչ մի բանի չի բերում: Թեզեր են առաջ բերվում ՌԴ-ի մասին, որոնք էմոցիոնալ են: Իշխանությունները պնդում են, որ ՌԴ-ն Հայաստանի դեմ հիբրիդային պատերազմ է վարում, Ռ. Քոչարյանն էլ պնդում է, որ եթե նման բան լիներ, ապա, ԱՄՆ-ի նման, մաքսատուրքերը՝ հայկական ապրանքատեսակների վրա, կսահմաներ 200 տոկոսով: Սա ի՞նչ է՝ արձանագրո՞ւմ, թե՞ պրոռուսականություն»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏՈՒՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ ՄԵԿԸ ՄՅՈՒՍԻ ԵՏԵՎԻՑ ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ԵՆ ՀԱՅՏՆՈՒՄ

Քրեական գործերով հակակոռուպցիոն դատարանում քննվում է Իջեւանի նախկին քաղաքապետ Վարուժան Ներսիսյանի վերաբերյալ քրեական երկու գործ: Նրան մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 1999-2011-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով Իջեւան համայնքի ղեկավարի պաշտոնը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն, ի թիվս այլնի, ունենալով համայնքի ավագանու որոշմամբ եւ սահմանված պայմաններով համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու կամ օգտագործման տրամադրելու, ինչպես նաեւ համայնքի անունից հանդես գալու լիազորություններ, հանդիսանալով պաշտոնատար անձ, 2 դեպքով «պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, որով էական վնաս է պատճառել համայնքի օրինական շահերին», իսկ 1 դեպքով օրինականացրել է ապօրինի գործողության արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված անշարժ գույքը:

Այդ գործով նրա որդուն՝ Նաիրի Ներսիսյանին, մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, միջոցներ տրամադրելով, օժանդակել է Իջեւան համայնքի ղեկավար Վ. Ներսիսյանին՝ վերջինիս պաշտոնեական լիազորությունները չարաշահելուն, ինչպես նաեւ խմբի կազմում օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված անշարժ գույքը: Հորը՝ Վ. Ներսիսյանին, մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով («Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը») (2 դրվագ) եւ 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով («Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից»): Որդուն՝ Նաիրի Ներսիսյանին մեղադրանք է առաջադրվել 38-308 հոդվածի 1-ին մասով («Պաշտոնեական լիազորությունները չարաշահելուն հանցակցությունը») եւ 190 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով: Վ. Ներսիսյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել տնային կալանքը, Ն. Ներսիսյանի նկատմամբ՝ վարչական հսկողությունը:

2025թ. դեկտեմբերի 2-ին քրեական գործը հանձնվել է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վարդգես Սարգսյանին: Դեկտեմբերի 8-ին անցկացված նախնական դատալսումների ժամանակ հանրային մեղադրող Ա. Այվազյանը բացարկ է հայտնել դատավոր Վ. Սարգսյանին: Միջնորդության մեջ մեղադրողը գրել է. «2022թ. օգոստոս ամսվանից մինչեւ 2023թ. ապրիլ ամիսը աշխատել եմ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Վարդգես Սարգսյանի կազմում՝ որպես դատավորի գործավար: Ավելորդ չէ նշել, որ դատավոր Վ. Սարգսյանի հետ ունեցել եմ աշխատանքային փոխհարաբերություններ եւ հիշյալ նախկին փոխհարաբերությունների բնույթով պայմանավորված՝ գտնում եմ, որ օբյեկտիվ դիտորդի մոտ լուրջ կասկածներ կարող են առաջանալ վերջինիս անկողմնակալության մեջ: Հատկանշական է, որ ես սույն քրեական գործին ներգրավվել եմ դեռեւս նախաքննության ընթացքում, ծանոթ եմ քրեական գործի ամբողջ ծավալին: Մասնավորապես՝ մեղադրյալների նկատմամբ հանրային քրեական հետապնդումներ հարուցվել են իմ կողմից կայացված որոշումներով, մեղադրական եզրակացությունը եւս հաստատվել է իմ կողմից: Իսկ քննարկվող գործը մակագրվել է դատավորին միայն 2025թ. դեկտեմբերի 2-ին»: Այս միջնորդությունից հետո դատավոր Վ. Սարգսյանն ինքնաբացարկ է հայտնել եւ գործը հանձնել Հակակոռուպցիոն դատարանի նախագահին՝ վերաբաշխման: Դեկտեմբերի 15-ին Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Լեւոն Պետրոսյանը որոշել է ստանձնել այդ քրեական գործով վարույթը: Նախնական դատալսումների վերջին նիստը կայացել է հունվարի 23-ին:

Երկրորդ քրեական գործով Վ. Ներսիսյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, «զբաղեցնելով համայնքի ղեկավարի պաշտոնը, Իջեւան համայնքի Անկախության 13/41 հասցեում գտնվող 0,0905 հա մակերեսով անշարժ գույքն իրենը դարձնելու շահադիտական դրդումներից ելնելով, պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, որով էական վնաս է պատճառել համայնքի օրինական շահերին, այնուհետեւ պաշտոնեական դիրքն օգտագործելով՝ օրինականացրել է հիշյալ ապօրինի գործողության արդյունքում հանցավոր ճանապարհով ստացված վերը նշված անշարժ գույքը»: Վ. Ներսիսյանին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 190 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով («Հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով»), 441 հոդվածի 1-ին մասով («Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը, կամ լիազորություններն անցնելը») եւ 296 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով («Փողերի լվացումը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով»): Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել գրավը:

Սակայն այս գործով եւս դատավոր Վարդգես Ստեփանյանը 2025թ. հուլիսի 14-ին որոշել է ինքնաբացարկ հայտնել այն հիմքով, որ մեղադրյալ Վարուժան Ներսիսյանն իր համակուրսեցի Նելլի Ներսիսյանի հայրն է, ինքն ուսանողական տարիներին եւ դրանից հետո Վ. Ներսիսյանի դստեր հետ պահպանել է ընկերական հարաբերություններ: Քրեական գործով վարույթը հիմա էլ ստանձնել է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Տիգրան Դավթյանը: Այդ գործով նախնական դատալսումների հաջորդ նիստը նշանակված է փետրվարի 9-ին:

Էջը՝ Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆԻ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՔԱՎՈՐ ՄԱՐԶՊԵՏԸ 20Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՋՈԿԱՏ Է ԿԱԶՄԵԼ, ՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ ԳՆԱՆ

Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում գրված է. «Այսօր՝ հունվարի 16-ին, տեղի է ունեցել 2026 թվականի ձմեռային զորակոչի Տավուշի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստը, որը վարել է Տավուշի մարզպետ, զորակոչային հանձնաժողովի նախագահ Հայկ Ղալումյանը: Օրակարգի առաջին հարցով ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Տավուշի տարածքային ստորաբաժանման ղեկավար՝ գնդապետ Միհեր Ավալյանը ներկայացրել է հաշվետվություն 2026 թվականի ձմեռային զորակոչի ընթացքի վերաբերյալ»:

ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Տավուշի տարածքային ստորաբաժանում չկա, դա Տավուշի զինկոմիսարիատն է, դրա ղեկավար Միհեր Ավալյանը Տավուշի զինկոմն է: Տավուշի մարզպետ, զորակոչային հանձնաժողովի նախագահ Հայկ Ղալումյանը պետք է ի պաշտոնե դա իմանար:

2025թ. հուլիսի 8-ին ՀՀ ՊՆ գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի ստորագրությամբ գրություն եմ ստացել, որտեղ նշված է. «Ի պատասխան պաշտպանության նախարարին հասցեագրված 2025 թվականի հուլիսի 2-ի Ձեր հարցմանը՝ հայտնում ենք, որ զինվորական կոմիսարիատների օպտիմալացման շրջանակներում իրականացված կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարի 2023թ. նոյեմբերի 23-ի համապատասխան հրամանով ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայությունը վերանվանվել է ՀՀ պաշտպանության նախարարության հանրապետական զինվորական կոմիսարիատ, իսկ տարածքային ստորաբաժանումները՝ Երեւան քաղաքի եւ մարզերի զինվորական կոմիսարիատներ»:

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, ամուսնության քավոր Հայկ Ղալումյանը մարզի զորակոչային հանձնաժողովի նախագահն է, նա ուրիշների տղաներին զինծառայության է ուղարկում, սակայն իր սանիկ Նիկոլ Փաշինյանի նման՝ ինքը նույնպես չի ծառայել բանակում: Այդ մասին գրավոր հարցմանս մարզպետը պատասխանել է, որ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվել է օրենքով սահմանված կարգով:

44-օրյա պատերազմի ժամանակ, 2020թ. հոկտեմբերի 21-ին Նիկոլ Փաշինյանը դիմեց բոլոր հայ տղամարդկանց՝ նրանց կոչ անելով զենք վերցնել եւ մեկնել Արցախ: Առաջիններից մեկն այդ կոչին արձագանքեց Փաշինյանի կողմից 2019թ. սեպտեմբերի 12-ին Իջեւան համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակված Հայկ Ղալումյանը, որն իր հերթին կոչով դիմեց իր հայրենակիցներին. «Հայրենիքի պաշտպանության սրբազան առաքելության համար ստեղծվում է «Իջեւան» կամավորական ջոկատ: Հայրենիքի առջեւ իմ սուրբ պարտքը կատարելու համար առաջինն եմ կամավորագրվում այս ջոկատին: Կոչ անում բոլորիդ՝ համախմբվել եւ միասին կերտել մեր նորօրյա հաղթանակը: Վստահ եղեք, որ մենք առաջնագիծ ենք մեկնում մեր վերջնական ու անշրջելի հաղթանակն ամրագրելու համար»:

Սակայն այդ ջոկատը մի քանի օր Տավուշի մարզում վարժանքների մասնակցելուց հետո Արցախ չմեկնեց, նաեւ չմեկնեց Տավուշի սահմանագոտին պաշտպանելու: Այդ կապակցությամբ տեղեկատվական հարցում եմ ուղարկել 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին. ««Իջեւան» կամավորական ջոկատը մեկնե՞լ է Արցախ, եթե՝ ոչ, Տավուշի սահմա՞ննն է պաշտպանել, եթե՝ այո, ապա մարզի ո՞ր տարածաշրջանի առաջնագիծն է պաշտպանել, ո՞ր ժամկետում, քանի՞ օր: Ճի՞շտ են տեղեկությունները, որ այդ ջոկատի անդամները ՀՀ պետական բյուջեից 3 ամսվա (2020թ. հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր) համար աշխատավարձ են ստացել, մեկ ամսվանը՝ ամբողջությամբ, երկու ամսվա համար՝ ոչ ամբողջությամբ: Ինչքա՞ն է կազմել ձեր ստացած աշխատավարձը ընդհանուր 3 ամսվա համար»:

Հ. Ղալումյանի պատասխանում նշված է. «Ի պատասխան Ձեր 03.08.2021թ. թիվ 261602 հարցման, հայտնում եմ, որ «Իջեւան» կամավորական ջոկատ ստեղծելու վերաբերյալ 2020թ. հոկտեմբերի 22-ին սահմանների պաշտպանության համար կոչով դիմել եմ բնակչությանը: Կամավորական սկզբունքով կազմավորվել է ջոկատ, որը հանդերձավորվել, սպառազինվել եւ անցել է նախապատրաստական վարժանքներ X զորամասում: Կամավորական ջոկատի կիրառման բոլոր հարցերը կոորդինացվել են ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ծառայությունների կողմից: Ծառայության համար իմ կողմից ստացված ամբողջ գումարը փոխանցվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամին: Հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 2-րդ կետերը, տեղեկատվություն չի տրամադրվում ջոկատի ռազմական գործողություններին մասնակցելու եւ ստացված աշխատավարձի չափի մասին»:

Արցախ մեկնելու համար կամավորագրվածներից մեկը, որի անունը չենք հրապարակում, մեզ հայտնեց հետեւյալը. «Ես էլ եմ այդ գումարտակում եղել, մի 5-6 օր գնացինք-պարապեցինք, որ պետք է տանեին Տավուշի դիրքեր: Հետո ասացին՝ գնացեք, ձեր տներում պատրաստ սպասեցեք, մենք կկանչենք, այդպես էլ չկանչեցին: Հետո երկու ամսվա համար մի 200 հազար դրամ փող տվին, չգիտեմ՝ ինչի համար»:

ՏԵՍԱԿԵՏ

ՓԱՇԻՆՅԱՆԻՑ ՓԱԽԱԾՆԵՐԸ ԲՌՆԻ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՒՄ ԵՆ

Հունվարի 25-ին Նիկոլ Փաշինյանը որպես ուրախալի լուր տարածեց այն փաստը, որ 2025 թվականին Հայաստան մուտք գործած ՀՀ քաղաքացիների թիվը գերազանցել է Հայաստանից գնացածների թվին՝ այդ փաստը ներկայացնելով որպես իր իշխանության կողմից իրականացվող քաղաքականության ձեռքբերում: «2025 թվականին 8 հազար 660 Հայաստանի Հանրապետության քաղաքացի ավել է մուտք գործել մեր երկրի տարածք, քան ելք է գործել Հայաստանի Հանրապետությունից: Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ելքի ու մուտքի տարբերության նման վիճակագրություն, մեր երկրում վարվում է 2010 թվականից, եւ առաջին անգամ է, որ մենք ունենք դրական տարբերություն»: Ըստ Փաշինյանի, սա արդյունք է, առաջինը՝ խաղաղության եւ երկրորդը՝ տնտեսական զարգացման կամ խաղաղության պայմաններում տնտեսական զարգացման: Փաշինյանը հերթական անգամ ստում է եւ ստում է կրկնակի՝ իրենից չկախված իրադարձությունները վերագրելով իրեն:

Փաշինյանի սույն հայտարարությունից ուղիղ մեկ օր հետո տեղեկություն տարածվեց, որ Հայաստան վայրէջք է կատարել ԱՄՆ-ից ժամանած Boeing 767-300 ինքնաթիռը, որը Հայաստան է բերել ԱՄՆ իշխանությունների կողմից արտաքսված ապօրինի ներգաղթյալների: Թեեւ Հայաստանի արտգործնախարարությունը հաստատել է այս տեղեկությունը, բայց չի հստակեցրել արտաքսված ներգաղթյալների թիվը: Այդ մարդիկ Հայաստանից փախածներն են, նրանք, ամենայն հավանականությամբ, փախել են Նիկոլ Փաշինյանի իշխանության տարիներին, ինչու՝ որովհետեւ ավելի վաղ փախածները հասցրած կլինեին նատուրալիզացվել՝ քաղաքացիություն կամ այլ կարգավիճակ ստանալ, որի դեպքում արտաքսելն ավելի դժվար կլիներ: Այդ մարդիկ Հայաստան չէին եկել, քանի որ Հայաստանում խաղաղություն է կամ տնտեսական զարգացում, նրանք Հայաստան են բերվել պարտադրաբար, նրանց որսացել են ԱՄՆ քաղաքների փողոցներից, խանութներից կամ այլ հանրային վայրերից եւ ուղարկել իրենց հայրենիք: Սա առաջին դեպքը չէ, որ ԱՄՆ իշխանությունները Հայաստան են արտաքսում ՀՀ քաղաքացիների: Դա սկսվեց անցած տարվա սկզբից, երբ ԱՄՆ նախագահի պաշտոնը զբաղեցրեց Դոնալդ Թրամփը, որի նախընտրական խոստումներից մեկն էլ ապօրինի ներգաղթի կասեցումն էր, երկիրը ներգաղթյալներից ազատելը, ու նա միանգամից հրահանգեց անցնել գործի: Թե անցած տարի քանի ՀՀ քաղաքացի է արտաքսվել ԱՄՆ-ից, որեւէ պաշտոնական վիճակագրություն չկա, Հայաստանի իշխանություն կոչվածը որեւէ թիվ չի հրապարակում, բայց այդ մարդկանց անձնական դժբախտությունն է, որ Փաշինյանը ներկայացնում է իբրեւ իր կառավարության, իր իշխանության հաջողություն:

Առաջիկա տարիներին նման «հաջողություններ» կարող են էլի գրանցվել, եւ այս տարի կամ հաջորդ տարի Հայաստան եկած եւ գնացած ՀՀ քաղաքացիների թվի տարբերությունը կարող է անհամեմատ ավելի մեծ լինել: Ոչ միայն Միացյալ Նահանգները, այլեւ Ռուսաստանը եւ Եվրամիությունը եւս խստացնում են ներգաղթի պայմանները, ապօրինի ներգաղթյալների նկատմամբ վարվող քաղաքականությունը եւ արտաքսում են անօրինական կարգով իրենց երկրներում ապրող օտարերկրյա քաղաքացիներին:

Սրա պատճառը երկուսն է. մեկը՝ կարճաժամկետ, մյուսը՝ երկարաժամկետ: Առաջինն ամբողջ աշխարհում տեղի ունեցող տնտեսական ստագնացիան է, տնտեսական ճահճացումը եւ զարգացման բացակայությունը: Երբ երկրների տնտեսությունն արագ զարգանում է, ստեղծվում են նոր ընկերություններ, եղածներն ընդլայնում են իրենց գործունեությունը, տնտեսությունը կարիք է ունենում հավելյալ աշխատուժի, որը լրացվում է տնտեսապես հետամնաց երկրներից ներգաղթյալների հաշվին: Հիմա ամբողջ աշխարհում տնտեսական ճգնաժամ է՝ տնտեսական կրճատում, կրճատվում են նաեւ աշխատատեղերը, քաղաքացիները բողոքում են, որ ներգաղթյալները խլում են իրենց աշխատատեղերը, եւ կառավարությունները ներգաղթյալներին արտաքսելով՝ պաշտպանում են իրենց աշխատաշուկան, իրենց քաղաքացիների իրավունքները:

Երկրորդ պատճառը ռոբոտաշինության եւ արհեստական բանականության զարգացումն է. մեկ տարի առաջ գրել էինք, որ ռոբոտները նախ փոխարինելու են էժան եւ մասնագիտական լուրջ պատրաստություն չունեցող աշխատուժին: Վերջերս կարդացի, որ եվրոպական ինքնաթիռաշինական «Էյրբաս» ընկերությունը պայմանագիր է կնքել չինական մարդանման ռոբոտներ արտադրող ընկերության հետ, որի արտադրած ռոբոտները կփոխարինեն արտադրության մեջ ներգրավված մարդկանց: Մարդկանց ռոբոտներով փոխարինելու միտումը շարունակվելու է նաեւ առաջիկայում, հինգ, առավելագույնը տասը տարի հետո ականատես ենք լինելու տեխնոլոգիական հերթական հեղափոխությանը, երբ ռոբոտները փոխարինելու են շատ մասնագիտությունների տեր մարդկանց: Աշխատաշուկան ավելի է սեղմվելու, եւ դրսից եկածների կարիքն ավելի է քչանալու, իսկ անգործ, անզբաղմունք մարդը խնդիր է յուրաքանչյուր հասարակության ու պետության համար, վտանգ է, որից պետք է ազատվել: Այնպես որ, առաջիկայում նույն պրոցեսը՝ ապօրինի ներգաղթյալների արտաքսում, մենք կտեսնենք նաեւ Ռուսաստանից եւ Եվրոպայից: Որքան երկիրն ավելի զարգացած է, տեխնոլոգիապես ավելի առաջադեմ, այնքան մարդկային աշխատուժի կարիք ավելի քիչ է ունենալու:

Հայաստանի նոր իշխանությունը պետք է մտածի, թե ինքն ինչպես է օգտագործելու այդ մարդկանց, այդ աշխատուժը, երկրում ինչ նոր տնտեսական հնարավորություններ են ստեղծվելու՝ նրանց ինտեգրելու համար, ոչ թե, Քաջ Նազարի նման, իրենց հետ կապ չունեցող երեւույթները վերագրի իրեն ու սկսի դրանով հպարտանալ: Մի կարեւոր արձանագրում եւս. մարդիկ պետք է հասկանան, որ Փաշինյանից եւ նրա աղետալի իշխանությունից փախչելու տեղ չկա, փախչելով հնարավոր չէ փրկվել, պետք է երկիրը փրկել:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԻՆՉ ԷԼ ԱՆԵԻՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ, ԵԽԽՎ-ՈՒՄ ՊԵՏՔ Է ԸՆԴՈՒՆՎԵ՞Ր ԱՅԴ ԲԱՆԱՁԵՎԸ

Մարդիկ (խոսքը նորմալ՝ գրագետ ու հայրենասեր մարդկանց մասին է) մեղադրում են ԵԽԽՎ պատվիրակությունում ներկայացված ընդդիմադիր պատգամավորներ Արմեն Գեւորգյանին, Արմեն Ռուստամյանին եւ Հայկ Մամիջանյանին: Բողոքում են, որ նրանք գործ չեն անում այդ կառույցում: Բողոքում են, որ նրանք ոչինչ չեն արել, որպեսզի չընդունվեր Հայաստանի վերաբերյալ ամբողջովին իշխանամետ վերջին զեկույցը: Ու Հայկ Մամիջանյանն էլ, ստիպված, լայվ է մտնում Ստրասբուրգից ու արդարանում: Չգիտեմ, նրանք ինչ են անում կամ չեն անում՝ նրանց կողքին չեմ, բայց մի բան հստակ գիտեմ. եթե ԵՄ-ն 15 միլիոն եվրո է նվիրում գործող իշխանությանը՝ առաջիկա ԱԺ ընտրություններին վերարտադրվելու նպատակով, ընդդիմադիր պատգամավորները սար էլ շուռ տային, ԵԽԽՎ-ում պետք է ընդունվեր հենց այդ բանաձեւը:

Հիշենք Ռումինիայի նախանցյալ տարվա նախագահական ընտրության առաջին փուլը չեղարկելը: Հիշենք անցյալ տարվա Մոլդովայի գերկեղծված խորհրդարանական ընտրությունը: Որքան էլ տհաճ լինի խոստովանելը, ԵԽԽՎ-ն կամ էլ թեկուզ ԵՄ-ն վաղուց այն կառույցները չեն, դեպի ուր ձգտում էինք մենք նախկին իշխանությունների օրոք: Եվ, այո, ինչպես էլ աշխատեին ընդդիմադիր մեր պատվիրակները, արդյունքը լինելու էր նույնը: Եվրոպական կառույցներին անհրաժեշտ է, որ Հայաստանում վերարտադրվի գործող իշխանությունը, ու ով ինչ էլ փորձեր անել, այնտեղ ամեն ինչ արվելու է՝ այդ նպատակին հասնելու համար: Իսկ եթե այդ հանգամանքին էլ գումարենք ՀՀ ԱԳ նախարարի պաշտոնը զբաղեցնող Միրզոյան Արոյի (Արարատի) ելույթը կամ հարցերին տրված պատասխանները ԵԽԽՎ-ում, ապա պատկերը կամբողջանա: Կստացվի, որ եվրոպացիք հեչ մեղավոր չեն, որ «ազատության թշնամիները» Հայաստանում փորձում են տապալել ժողովրդի քվեն ստացած փաշինյանական ժողովրդավարությունը:

Չնայած, այնուամենայնիվ, եթե մեր այս օրերում ԵԽԽՎ-ն լիներ իսկապես ժողովրդավարության իրական բաստիոն, ապա գոնե մեկ հարց կառաջանար այդ կառույցի պատվիրակների կամ գոնե այնտեղ հավատարմագրված լրագրողների մոտ: Խոսքը Միրզոյանի այս դատողության մասին է. «Հոգեւորականները Հայաստանում չեն հետապնդվում: Բայց ես ուզում եմ հարց տալ: Եթե որոշ քաղաքացիներ կոչ են անում բռնի կերպով տապալել օրինական ընտրված կառավարությունը, ինչպես նաեւ սպանել նրա ներկայացուցիչներին, այդ թվում՝ ինձ, ինչպիսի՞ն կլինի ձեր արձագանքը»: Նախ, պետք է ճշտվեր՝ իսկապես նման բան եղե՞լ է, թե՞ ոչ: Եվ եթե Արոն ասեր, որ Հայաստանում քրեական գործ է հարուցված այդ փաստերով, պետք է ճշտեին, թե առկա՞ է արդյոք դատարանի վերջնական որոշումը: Միայն այդ դեպքում Արոն կարող էր նման բնույթի հայտարարություն թույլ տար իրեն:

Եվ երկրորդ. կհետաքրքրվեին, թե կոնկրետ ինչու պետք է նրան սպանելու կոչ անեին, եթե կառավարության ղեկավարն ինքը չէ ու որոշումների ինքը չի ընդունում, այն էլ՝ միայնակ: Իսկ եթե Արոն սխալվեր ու ասեր, որ մի անգամ արդեն իրեն փորձել են սպանել, պետք է ճշտեին, թե երբ է կատարվել դա: Ու իմանալով, որ դա տեղի է ունեցել 5 տարի առաջ, 44-օրյա խայտառակ պարտությունից հետո, պետք է հետաքրքրվեին, թե դա ինչ կապ ուներ հոգեւորականների հետ: Արոն, իհարկե, կփորձեր իրավիճակ փրկել Նիկոլին բնորոշ «կոռուպցիոնով», բայց այդ փորձը կտապալվեր: Ու ԵԽԽՎ-ում էլ կհասկանային, որ, ի դեմս Նիկոլի իշխանության, գործ ունեն ոչ թե իրական ժողովրդավարության, այլ լեգիտիմությունը վաղուց կորցրած ու ըստ այդմ՝ ժողովրդավարության տեսակետից ու դրա անվան ներքո իշխանությունը զավթած խմբակի հետ: Բայց քանի որ այդ խմբակի մնալը Հայաստանի իշխանության ղեկին ձեռնտու է ԵԽԽՎ-ին, որեւէ մեկը նման հարցեր չէր տա Արարատ-Արոյին: Ու ոչ էլ նույնիսկ կմտածեր նման հարց տալու անհրաժեշտության մասին:

Մի փոքր շեղվենք թեմայից. վերջերս խոստացել էի, որ Միրզոյանին հիշատակելիս, Նիկոլին ինադու, անընդհատ օգտագործելու եմ նրա անվան ամբողջական ձեւը՝ Արարատ: Բայց ես ինձ անընդհատ էլ բռնեցնում եմ այն մտքի վրա, որ ԱԳ նախարարի պաշտոնը զբաղեցնող անձն ախր որեւէ առնչություն չունի Արարատ լեռան հետ: Արտասանեք գրաբարյան «լյառն» կամ թեկուզ աշխարհաբար «լեռ» բառն ու միաժամանակ պատկերացրեք Միրզոյանին: Չի ստացվում, չէ՞: Ու այդ պատճառով էլ որոշեցի «Արարատ»-ն ու «Արո»-ն մեկ-մեկ օգտագործել իրար հետ: Կարծում եմ, որ «Հրապարակ»-ի գլխավոր խմբագիրը կթույլատրի այդ անհամապատասխանությունը հայերենի կանոններին:

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՈՉ ՄԻ ԼՈՒՐՋ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՌԱՋ ՇԱՐԺՎԵԼ՝ ԱՌԱՆՑ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՆԴՆԵՐԻ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ

*«Հրապարակի» զրուցակիցն արգենտինահայ փաստաբան, Տուկումանի համալսարանի ցեղասպանության ուսումնասիրությունների պրոֆեսոր եւ Բուենոս Այրեսի Սենատի թեկնածու **Լուսիանա Մինասյանն** է, որը զբաղվում է Բաքվում պահվող հայերի շահերի պաշտպանությամբ:*

- Վերջին օրերին մի քանի հնչեղ հրապարակային հայտարարություն եք տարածել: Նախ, տեղակացանք, որ Society for Orphaned Armenian Relief-ի (SOAR) անունից՝ որպես Բուենոս Այրեսի մասնաճյուղի նախագահ, ինչպես նաեւ որպես հայ ռազմագերի Լյուդվիգ Մկրտչյանի ներկայացուցիչ, դիմել եք ԱՄՆ նախագահին՝ պահանջելով նպաստել Բաքվում ավելի քան 5 տարի ապօրինի կալանքի տակ գտնվող ՀՀ քաղաքացու անհապաղ ազատ արձակմանը: Վիգեն Էուլջեքչյանի հետ կապված Ձեր գործադրած ջանքերից հետո հաջողություն կունենամք նաեւ Լյուդվիգի հարցով. կարծես Վիգենի հետ խցակիցներ են եղել:

- Լյուդվիգ Մկրտչյանի անունից իմ կոչը հիմնված է նույն սկզբունքի վրա, որով առաջնորդվում էի Վիգեն Էուլջեքչյանի գործով. ոչ մի հայ չպետք է մոռացվի, եթե անարդարացիորեն բանտարկված է քաղաքական պատճառներով: Վիգենի գործը ցույց տվեց, որ համառությունը, միջազգային ուշադրությունը եւ համակարգված պաշտպանությունը կարող են իրական արդյունք տալ: Լյուդվիգի իրավիճակը խորապես մտահոգիչ է, հատկապես հաշվի առնելով նրա կալանքի տեւողությունը եւ պատշաճ դատավարության բացակայությունը: Չնայած ես չեմ կարող պատասխանատու կերպով խոստանալ արդյունքներ, կարող եմ հստակ ասել, որ մենք կիրառում ենք նույն մակարդակի նվիրվածություն, միջազգային շփում եւ ճնշում: Այո, Լյուդվիգն ու Վիգենը խցակիցներ էին, եւ այդ մարդկային կապը միայն խորացնում է այս աշխատանքը շարունակելու բարոյական պարտավորությունը: Միեւնույն ժամանակ, մենք պետք է ուշադիր հետեւենք ներկայիս համաշխարհային զարգացումներին: Երկու օր առաջ վերադարձվեց Իսրայել-Գազա գործընթացի վերջին պատանդի մարմինը՝ մի իրադարձություն, որն անմիջականորեն կապված է բանակցային խաղաղության 2-րդ փուլի հետ: Սա աշխարհին հիշեցնում է, որ պատանդների եւ բանտարկյալների հարցերը երկրորդական չեն՝ դրանք գլխավորն են ցանկացած լուրջ խաղաղության գործընթացի համար:

- Սպիտակ տնից արձագանքվել են, ինչ է հայտնի այս պահին:

- Այս փուլում կոչը պաշտոնապես ներկայացվել է պաշտոնական կապուղիներով: Ինչպես ընդունված է նման դեպքերում, արձագանքները միշտ չէ, որ անհապաղ են լինում, հաճախ տեղի են ունենում դիվանագիտական կամ ինստիտուցիոնալ ուղիներով, այլ ոչ թե հրապարակային հայտարարություններով: Ամենակարեւորն այն է, որ խնդիրն այժմ պաշտոնապես արձանագրվել է: Պաշտպանությունը գործում է ժամանակի, այլ ոչ թե մեկ գիշերվա ընթացքում: Կարեւոր է, որ վերջին միջազգային զարգացումները ցույց են տալիս, որ պատանդների եւ բանտարկյալների հարցերը գնալով ավելի ու ավելի են դիտարկվում որպես դիվանագիտության մեջ բարի կամքի հիմնական ցուցանիշներ: Սա ընդգծում է հայկական գործերի հետեւողականորեն եւ լրջորեն բարձրաձայնելու կարեւորությունը:

- Թրամփի վարչակազմի եւ անձամբ նախագահի ջանքերով հարյուրավոր քաղբանտարկյալներ եւ գերիներ են ազատ արձակվում Վենեսուելայից, Պաղեստինից եւ Իսրայելից: Հայ բանտարկյալների ճակատագիրն իրապես հուզո՞ւմ է Վաշինգտոնին. հիշում ենք, նույն Թրամփն օգոստոսին Փաշինյանի հետ հանդիպման ժամանակ ակնարկեց 23 հայ քրիստոնյաներին ազատ արձակելու՝ Ադրբեջանին դիմելու իր մտադրության մասին:

- Սա ամենադժվար եւ ամենակարեւոր հարցն է: Միացյալ Նահանգները բազմիցս ցույց է տվել, որ ունակ է առաջնահերթություն տալ մարդասիրական հարցերին, երբ կա քաղաքական կամք: Վերջին օրինակներից են Վենեսուելայի, Իսրայել-Պաղեստինի եւ այլ տարածաշրջանների միջեւ բանակցությունները, որտեղ պատանդների, կալանավորների, քաղաքացիական անձանց եւ երեխաների ճակատագիրը դարձել է դիվանագիտական համաձայնագրերի կենտրոնական տարր: Մենք հիմա կրկին տեսնում ենք սա Իսրայել-Գազա համատեքստում. պատանդների մարմինների վերադարձը, փոխանակումները, համաձայնագրերի մարդասիրական փուլերը. այս ամենը ցույց է տալիս, որ ոչ մի լուրջ խաղաղության գործընթաց չի կարող առաջ շարժվել՝ առանց նախեւառաջ մարդկային կորուստը լուծելու: Յուրաքանչյուր համաձայնագիր, որին նախագահ Թրամփն անձամբ մասնակցել է, մշտապես ներառել է ուշադրություն հետեւյալ հարցերի վրա. պատանդներ, ռազմագերիներ, քաղաքացիական անձինք, երեխաներ եւ մարդասիրական պաշտպանություն: Սրանք քաղաքական բարեհաճություններ չեն: Սրանք իրավական եւ բարոյական պարտավորություններ են Ժնեւի կոնվենցիաների համաձայն: Հետեւաբար, հարցն այն չէ, թե արդյո՞ք Վաշինգտոնը կարող է գործել: Ակնհայտորեն՝ կարող է: Հարցն այն է, թե արդյո՞ք հայ բանտարկյալներին կվերաբերվեն նույն լրջությամբ եւ բարոյական հրատապությամբ, ինչպես մյուսներին: Նախագահ Թրամփը՝ ինքը, հրապարակավ բարձրացրեց հայ քրիստոնյա բանտարկյալների հարցը՝ վարչապետ Փաշինյանի հետ օգոստոսյան հանդիպման ժամանակ: Այդ հայտարարությունը կարեւոր է: Մեր պարտականությունն այժմ ապահովելն է, որ այդ խոսքերը վերածվեն իրական մարդկանց իրական պաշտպանության: Մենք հատուկ վերաբերմունք չենք խնդրում: Մենք խնդրում ենք, որ հայերի կյանքը հավասարապես արժեւորվի:

- Տեղեկացանք նաեւ, որ պաշտոնապես դիմել եք ՄԱԿ-ի հատուկ զեկուցողին՝ ՌԴ-ում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ, ի մասնավորի՝ Արթուր Տերչանյանի եւ եւս յոթ դատապարտյալների գործով: Վերջինս կապված է 2022 թվականի հոկտեմբերի 8-ին Ղրիմի (Կերչի) կամրջի վրա տեղի ունեցած պայթյունի եւ դրա շրջանակում ութ անձանց դատապարտման հետ, այդ թվում՝ ՀՀ քաղաքացի Արթուր Տերչանյանի, որը դատապարտվել է ցմահ ազատազրկման: Եթե հակիրճ՝ կոնկրետ ի՞նչ եք պահանջում եւ ի՞նչ եք ակնկալում:

- Արթուր Տերչանյանի եւ մյուս յոթ դատապարտված անձանց վերաբերյալ կոչը վերաբերում է երկու հիմնարար բանի՝ արդար դատաքննության իրավունքին եւ քաղաքական դրդապատճառներով դատաքննությունից պաշտպանությանը: ՀՀ քաղաքացի Արթուր Տերչանյանը դատապարտվել է ցմահ ազատազրկման՝ հսկայական քաղաքական նշանակություն ունեցող գործով: Միայն այդ համատեքստը պահանջում է ավելի խիստ ուսումնասիրություն: Մտահոգությունները լուրջ են՝ անհատականացված ապացույցների բացակայություն, կասկածելի ապացույցների չափանիշներ եւ քաղաքական ճնշման ավելի լայն մթնոլորտ: ՄԱԿ-ի հատուկ զեկուցողին ուղղված մեր խնդրանքը հստակ է՝ գնահատել, թե արդյոք հարգվո՞ւմ են միջազգային արդար դատաքննության չափանիշները, գնահատել, թե արդյոք քաղաքական ճնշումն ազդո՞ւմ է դատական գործընթացի վրա, բարձրացնել գործը համապատասխան մարմինների առջեւ եւ ապահովել, որ գործը չանհետանա լռության մեջ, քանի որ այն քաղաքականապես անհարմար է: Մենք չենք խնդրում ՄԱԿ-ին կողմ բռնել: Մենք խնդրում ենք ՄԱԿ-ին՝ իր մանդատի շրջանակներում պաշտպանել մարդկային արժանապատվությունը, պահանջել պատշաճ դատավարություն եւ պաշտպանել այն սկզբունքները, որոնք պահպանելու համար այն ստեղծվել է:

- Օրերս Թրամփն ազդարարեց, որ փետրվարին Հայաստան եւ Ադրբեջան է ժամանելու փոխնախագահ Ջեյ Դի Վենսը: Նրա այցի հետ կապված, փաստորեն, վերջինիս եւս դիմել եք Արթուր Տերչանյանի հարցով: Մասնավորապես, կոչ եք արել ուսումնասիրել ՌԴ-ում ցմահ դատապարտված ՀՀ քաղաքացու գործը եւ աջակցել արդար դատաքննության, անմեղության կանխավարկածի եւ մարդու իրավունքների պաշտպանության համընդհանուր սկզբունքներին: ԱՄՆ-ն, ըստ Ձեզ, այս հարցով կկարողանա՞ ազդել, որոշակի ճնշում գործադրել Ռուսաստանի վրա:

- Միացյալ Նահանգները չի կարող որոշումներ թելադրել Ռուսաստանի Դաշնությանը, բայց կարող է բացարձակապես ազդել այն միջավայրի վրա, որտեղ քննարկվում են նման դեպքերը: Պատմությունը ցույց է տալիս, որ երբ խոշոր տերությունները մշտապես բարձրացնում են մարդու իրավունքների հետ կապված մտահոգություններ, հատկապես՝ բարձր մակարդակի դիվանագիտական խողովակներով, այդ մտահոգություններն աննկատ չեն մնում: Փոխնախագահ Ջեյ Դի Վենսին ուղղված իմ կոչը հիմնված է ոչ թե քաղաքական հակասություններին, այլ համընդհանուր սկզբունքների վրա՝ արդար դատաքննության իրավունք, անմեղության կանխավարկած եւ մարդկային արժանապատվության պաշտպանություն: Սրանք «հայկական հարցեր» կամ «ռուսական հարցեր» չեն՝ սրանք միջազգային իրավական չափորոշիչներ են, որոնք ճանաչվում են բոլոր քաղաքակիրթ պետությունների կողմից: Այսօրվա համաշխարհային դիվանագիտության մեջ մենք նաեւ հստակ տեսնում ենք, որ մարդասիրական հարցերը գնալով ավելի ու ավելի են դառնում ավելի լայն քաղաքական քննարկումների մաս: Պատանդներին, ռազմագերիներին, քաղաքացիական անձանց եւ քաղաքական կալանավորներին այլեւս որպես երկրորդական հարցեր չեն վերաբերվում. դրանք հաճախ կենտրոնական տեղ են զբաղեցնում բանակցություններում եւ վստահության ամրապնդման միջոցառումներում: Սա տեսանելի է վերջին մի քանի միջազգային գործընթացներում: Կարեւոր է նաեւ ընդունել, որ Վաշինգտոնի եւ Մոսկվայի միջեւ եղել են շարունակական հաղորդակցության ուղիներ: Սթիվ Ուիթքոֆի եւ Ջարեդ Քուշների նման գործիչների՝ Մոսկվա կատարած հանրային այցելություններն ու շփումները 2025 թվականին, ինչպես նաեւ՝ շփումների շարունակությունը մինչեւ 2026 թվականի սկիզբը, ցույց են տալիս, որ երկխոսություն գոյություն ունի: Որտեղ երկխոսություն գոյություն ունի, մարդասիրական հարցերը կարող են եւ պետք է բարձրացվեն: Միացյալ Նահանգներն իր դիվանագիտական կշռի եւ համաշխարհային գործերում դերի շնորհիվ կարող է օգնել՝ ապահովելու, որ նման դեպքերն անտեսված չմնան: Երբեմն ազդեցությունը գործում է ոչ թե հանրային ճնշման, այլ լուռ դիվանագիտության, բարոյական հեղինակության եւ հետեւողական ուշադրության միջոցով: Իմ ակնկալիքն այն չէ, որ Վաշինգտոնը «կլուծի» գործը, այլ՝ այն, որ կօգնի ապահովել, որ գործը դիտարկվի, քննվի, եւ դրան վերաբերվեն արժանի լրջությամբ: Ցմահ ազատազրկման դատապարտվածի համար միայն այդ ուշադրությունը կարող է տարբերություն լինել լռության եւ հույսի միջեւ: Առնվազն, ես կարծում եմ, որ Միացյալ Նահանգներն ունի եւ՛ կարողություն, եւ՛ բարոյական պատասխանատվություն՝ բարձրացնելու այն հարցը, թե արդարադատությունն իսկապես իրականացվո՞ւմ, թե՞ մարդը դատապարտվեց առանց ապացույցների քաղաքականապես լիցքավորված գործով:

Արա ԱԼՈՅԱՆ

«Խոժոռ գետը». հետաքրքիր վեպ՝ հարստանալու եւ ոսկու տենդի մասին

Ավելի քան մեկ դար առաջ՝ 1918 թվականին, Վլաչեսլավ Շիշկովը սկսեց գրել իր էպիկական մեծածավալ գործը՝ 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին Ռուսաստանի հեռավոր Սիբիրում բռնկված ոսկու տենդի մասին: Վեպը գրելուց երկու տասնամյակ առաջ Շիշկովը ճամփորդել էր սիբիրյան գետերով՝ Օբ, Ենիսեյ, Լենա, Անգարա, Իրտիշ, Ներքին Տունգուսկա: Հենց Ներքին Տունգուսկան էլ դարձել է վիպական հորինված «Խոժոռ գետը»՝ ահռելի մի տարերք, որ թվում է, թե իր լռությամբ ու բացարձակ անտարբերությամբ մշտապես ճնշում է վեպի հերոսներին: Վեպը հրատարակվել է 1928 թվականին, էկրանավորվել 1968 եւ 2021 թվականներին: Վեպում պատմվում է Գրոմովների կլանի մասին: Նրանք՝ այսօրվա ընկալմամբ, գործարարներ էին, վաճառականներ, արդյունաբերողներ ու ավազակներ՝ այն ժամանակների պատկերացումներով: Վեպը սկսվում է խանութպանի մահվամբ՝ շրջապատված իր ընտանիքի անդամներով: Մահացող Դանիիլ Գրոմովն իր վերջին շնչում կանչում է որդուն՝ Պյոտրին, ու նրան տալիս ողջ ունեցվածքը՝ որպես ժառանգություն: Նաեւ հայտնում է այն գաղտնիքը, թե ինչպես է կարողացել կուտակել իր հարստությունը: 19-րդ դարի Ռուսաստանի խորքերում Դանիլան կարողացել է հարստություն դիզել ավազակությամբ եւ մարդկանց կործանելով: Սակայն Պյոտրին այնքան էլ չի հուզում ունեցվածքի ծագումը: Նրա մտքում միայն հարուստ մարդու փայլուն ապագան է: Շուտով ուսումնառությունից վերադառնալու է որդին՝ Պրոխորը, եւ Պյոտրը նրան հանձնարարում է ճանապարհ բացել Խոժոռ գետով՝ դեպի Գրոմովների փառքի ու հարստության գագաթը: 17-ամյա Պրոխորը գնում է տայգա՝ առեւտրային ճանապարհներ հարթելու, տեղանքն ուսումնասիրելու եւ ռեսուրսներ ու հնարավորություններ որոնելու: Գրոմովների երեք սերունդը ներկայացնող՝ պապը, հայրը եւ որդին, վեպի սկզբում թվում է, թե շատ տարբեր են: Սակայն արյունոտ փողերի անեծքն իրեն երկար սպասեցնել չի տալիս, միայն թե պատշաճ ժամանակը պետք է վրա հասներ: Շիշկովը կարողանում է հերքել այն թեզը, թե որդիները պատասխանատու չեն իրենց հայրերի արարքների համար: Խառնաշփոթ ընտանեկան եւ գործարար հարաբերություններ, մութ առեղծվածներ, անցյալի գաղտնիքներ, տարատեսակ գայթակղություններ, սերեր եւ վայրիվերումներ.... այս ամենը վեպի շարադրանքի հիմքն են, որ այն դարձնում են հետաքրքիր ու գրավիչ՝ ընթերցողի համար:

23 ՏԱՐՈՒՄ ՏԱՎՈՒՇԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է 6 ՀԱԶԱՐ 428-ՈՎ

ՑԱՍԵՆ

Օրերս Նիկոլ Փաշինյանը հպարտությամբ զեկուցեց հայ հանրությանը, որ 2025 թվականին Հայաստան ելքի ու մուտքի թվերը վերջապես դրական սալդոյով են, այսինքն՝ ավելի շատ մարդ է եկել Հայաստան, քան մեկնել Հայաստանից: 8 հազար 660 մարդ ավելի է ժամանել Հայաստան, ինչը, ըստ Փաշինյանի, խոսում է ներգաղթի եւ խաղաղության մասին: Ուշագրավ է, որ իշխանական փորձագետները եւ Միգրացիայի վարչությունը 2025-ի օգոստոսին Հանրայինին հարցազրույցներ էին տվել եւ ասել. «Հայաստանի քաղաքացիները մեր երկրից այս տարվա առաջին վեց ամսում ավելի շատ մեկնել են, քան՝ եկել», եւ դա բացատրել էին այսպես. «Այդ տարբերության պատճառն ավելի շատ զբոսաշրջային այցելություններն են, ինչն իր հերթին խոսում է քաղաքացիների կյանքի պայմանների բարելավման մասին»:

Իհարկե, 8 հազար 660 թիվը շատ փոքր թիվ է, եւ անգամ անհարմար է, որ դրանով հպարտանում է երկրի վարչապետը, սակայն եթե որեւէ մեկը մեկնի մեր մարզեր, կտեսնի, որ ներգաղթի մասին խոսելն անգամ ծիծաղելի է: Հայաստանի անկախանալուց հետո Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերից, փոքր բնակավայրերից մեծ արտագաղթ է եղել: Սահմանագոտում ապրողները հայրենի շեները լքել, հեռացել են պատերազմական իրավիճակի, զբաղվածություն չունենալու, Հայաստանում տիրող անօրինականության, օտար երկրում ավելի լավ կյանք որոնելու պատճառներով: Բերդ համայնքի սահմանամերձ Մովսես գյուղից տասնյակ ընտանիքներ բնակություն են հաստատել Մոսկվայում, ուր զբաղվում են գործարարությամբ: Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղից տասնյակ ընտանիքներ արտագաղթել են Ռուսաստանի Բելգորոդի մարզի Ստարի Օսկոլ քաղաք, որը ոսկեպարցիները կատակով Նոր Ոսկեպար են կոչում: Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ, հեռավոր Բարեկամավան գյուղում այժմ ապրողներից թվով առավել շատ բարեկամավանցիներ ներկայում բնակվում են Ռուսաստանի Ստավրոպոլ քաղաքում եւ Ստավրոպոլի երկրամասում:

Տավուշի մարզից նաեւ ներքին արտագաղթ է եղել դեպի մայրաքաղաք եւ շարունակվում է: Սահմանամերձ եւ փոքր գյուղերի բնակիչները վերաբնակվում են Երեւանում, Հայաստանի այլ քաղաքներում: Տավուշի մարզի սահմանամերձ եւ փոքր գյուղերում արտագաղթի տխուր հետեւանքներն ակնառու են հատկապես երեկոները, երբ թաղամասերի տներում քիչ լույսեր են վառվում, առանձնատներում ապրողներն էլ հիմնականում տարեց մարդիկ են, որոնց զավակները մեկնել են, իրենք՝ մնացել: Արտագաղթի եւ ծնունդների թվի նվազման հետեւանքով անցած 35 տարում նվազել է դպրոցների աշակերտների թիվը: 2025թ. դեկտեմբերի 16-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել մարզի հանրակրթական դպրոցների աշխատողների եւ աշակերտների թվի վերաբերյալ: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում աշխատողների հաշվառում չի իրականացվում, սովորող աշակերտների թիվը 15 հազար 468 է»: Ինչո՞ւ պետական հանրակրթական դպրոցներում աշխատողների հաշվառում չի իրականացվում, դա անհասկանալի ու անտրամաբանական է: Տավուշի մարզպետարանից ստացված տվյալներով՝ 2002-2003 թթ. ուսումնական տարում Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում սովորել է 21 հազար 896 աշակերտ, որոնց դասավանդել է 2 հազար 532 ուսուցիչ: 23 տարում մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը, փաստորեն, նվազել է 6 հազար 428-ով, ինչը շատ մեծ թիվ է մեկ մարզի կտրվածքով:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՖԻԼՄԵՐ, ՈՐՈՆՔ ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

«ԶԱԽԼԻԿԸ»

Ռուսական կինովարձույթ է դուրս եկել Վլադիմիր Բեսեդինի «Զախլիկը» պատմական կինոնկարը, որի հիմքում Նիկոլայ Լեսկովի համանուն վիպակն է: Ֆիլմը հանդիսատեսին տեղափոխում է 19-րդ դարի վերջի Ռուսական կայսրություն: Կայսրական գահ է բարձրանում Ալեքսանդր 3-րդ ցարը, որի կերպարը մարմնավորել է Արթուր Իվանովը: Պետերբուրգը շողշողում է տոնական զարդարանքների եւ եռագույն կայսրական դրոշների մեջ: Կայսրությունը զարգանում է, ընդարձակվում, սակայն նաեւ բախվում ոչ այնքան բարեկամաբար տրամադրված հարեւաններին: Աֆղանստանում բախվում են ռուսական եւ բրիտանական շահերը: Աշխարհաքաղաքական դիմակայությունը սպառնում է վերածվել կամ սահմանային ռազմական բախման, կամ ներքին խժդժությունների եւ հեղափոխության, ինչը շատ ավելի վատ սցենարային զարգացում է: Ռուսական մայրաքաղաքում՝ ամենուր կարելի է հանդիպել լրտեսների եւ գործակալների: Նույնիսկ կայսրական պալատում կան լրտեսներ եւ գործակալներ: Կայսրական պալատ են ներթափանցել մեխանիկական լրտեսական միջատներ: Դրանցից մեկին հայտնաբերում է երիտասարդ սպա Պյոտր Օգարեւը, որի կերպարը մարմնավորել է Ֆյոդոր Ֆեդոտովը: Նա որոշում է բացահայտել այդ անսովոր մեխանիկական միջատի գաղտնիքը եւ իր հետաքննության ընթացքում որոշում է ներգրավել Տուլայում ապրող ինքնուս գյուտարար Զախլիկին, քանի որ միայն նա կարող էր հասկանալ, թե դա ինչ է եւ ինչ նպատակի համար է ծառայեցվում: Զախլիկն էլ համաձայնում է գնալ Պետերբուրգ, եթե պետությունն իրեն վերադարձնի իրենից խլված որդիներին: Մասնագետներն արձանագրել են արդեն ամենից ակնհայտը՝ կինոնկարում միայն վերնագիրը, հերոսների անուններն ու մի շարք այլ մանրամասներ են, որ հիշեցնում են Լեսկովի վիպակը: Մնացածն արդեն սցենարիստների երեւակայության ու մտքի թռիչքի արդյունքն է:

Սա դասական դետեկտիվի ժանրով զարգացող կինոնկար է, երբ նախ մտածում են, թե հանցագործը սա է, հետո՝ նա, եւ այսպես՝ սկսում հետապնդել կասկածյալներին, մինչեւ կբացահայտեն ճշմարտությունը: Հետաքրքիր եւ դինամիկ այս ֆիլմն արժե դիտել ոչ միայն պատմական կոնտեքստի եւ բավականին լավ բովանդակային կառուցվածքի, այլ նաեւ այն պատճառով, որ կինոնկարը դիտողին «թուլանալու»՝ ձանձրանալու հնարավորություն չի տալիս, եւ գործողությունները զարգանում են բավականին արագ:

«ՊՈՆԻՆ»

Բեաթրիս Գրանթը, որի կերպարը մարմնավորել է Էմիլիա Քլարկը, սուսուփուս կին է՝ բարձրագույն կրթությամբ, բարեկիրթ շարժուձեւով: Ամեն կերպ փորձում է հարմարվել 1970-ականների Մոսկվայի կյանքին: Ամուսինը ծառայում է դեսպանատանը, որը միշտ եղել է Կենտրոնական հետախուզական վարչության գործակալների քողարկման վայր: Ամերիկացի դիվանագետ ամուսինների բնակարանում գաղտնալսող սարքերը սովորական բան են, իսկ նրանց կրնկակոխ հետեւում է խորհրդային ՊԱԿ-ը: Նորմալ մթերքներ ճարելը մեծ խնդիր է: Ամենուր դեֆիցիտ է եւ հերթեր: Բեաթրիսը ռուսերեն խոսում է, սակայն կենցաղային բոլոր հարցերը լուծում են մեկ այլ կնոջ՝ նույնպես դեսպանատան աշխատակցի կնոջ՝ Թվայլա Հասբեթի միջոցով, որին մարմնավորել է Հեյլի Լու Ռիչարդսոնը: Երբ լրտես ամուսիններին սպանում են, կանայք մտնում են նրանց փոխարեն «խաղի մեջ»: Հատկապես, որ հետախուզության ղեկավար Վոլթերը՝ Էնդրիան Լեսթերը, որոշում է, որ խորհրդային հատուկ ծառայությունների ուշադրությունը նրանք դժվար թե գրավեն: Գրավիչ եւ արկածներով լեցուն սերիալ, որտեղ կարելի է տեսնել եւ խորհրդային 70-ականների կյանքը, եւ ԿԳԲ-ի գործակալների հավաքագրումը, եւ ժանրին հատուկ մյուս էլեմենտները: Սերիալի հեղինակներն արել են ամեն բան՝ խորհրդային մթնոլորտն ապահովելու համար: Նույնիսկ հատուկ խորհրդական են վարձել, որ ռուսական խորհրդավոր կենցաղի մանրամասները վերականգնեն: Սերիալի ռեժիսորներն ու սցենարիստներն են Սյուզան Ֆոգելը, Վյետ Իգուենն ու Էլի Պանկիվը:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՏՈԿՈՍԻ ՏԱԿ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԻԿ, ԲԱՆԿԵՐԸ, ՎԱՐԿԵՐԸ ԵՎ «ԹԱԼԱՆԸ»

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Հայաստանում հազիվ գտնվի մարդ, որ ասած չլինի. «Տոկոսի տակ եմ», «Բանկերը վաշխառուներ են, տզրուկներ», «Սա վարկ չէ, կողոպուտ է»: Այս խոսքերը վաղուց դարձել են մեր կենցաղային լեզվի մասը: Իսկ ինչ է իրականում կատարվում բանկային համակարգում: Արդյո՞ք դա իսկապես թալան է, թե՞ զարգացող տնտեսության մոդելի անխուսափելի մաս: Ինքս՝ որպես տարիներ շարունակ տոկոս վճարող մարդ, փորձեցի հասկանալ այդ բարդ, գուցե «հասկանալի» համակարգի տրամաբանությունը:

Այցելեցի ծանոթ բանկ, որտեղ աշխատում է իմ բարեկամներից մեկը: Հարցերիս տարափից հետո նա ժպտալով հարցրեց. «Ոնց որ թե հոդված ես ուզում գրել, հմ». «Ինչո՞ւ չէ, գուցե ընթերցողին օգտակար լինի»: Առաջարկեց խոսել դրսում. «Ներսում հազար շառ կա, հազար հարամի»: Նախ հարցրի. «Մի պատմություն եմ լսել, թե իբր մեկը վարկ է վերցրել, ռեստորան կառուցել, բայց եկամուտները սպասվածը չեն եղել, տարիներով մարել է տոկոսներ, տույժ-տուգանքներ եւ վերջում պարզել՝ բանկին արդեն ավելի շատ է վճարել, քան վերցրել էր, բայց, միեւնույն է՝ բանկը խլել է ռեստորանը՝ չփակված վարկի դիմաց: Հնարավո՞ր է նման բան»: «Չի բացառվում: Հիշիր՝ բանկն օրենքի ու դատարանի առաջ գրեթե միշտ արդար է դուրս գալիս: Բարոյականությունը բանկային կատեգորիա չէ»: Վերջում խնդրեց՝ հոդվածում անունը չերեւա: Փորձեցի հակաճառել, ասաց. «Ոչ ոք չի խոսի բացահայտ: Բանկերն առեւտրականների նման են. երբեք չեն բացահայտի իրենց գաղտնիքը, չեն «փնովի» ապրանքը: Քեզ միշտ կասեն. «Ախպերս, սա քեզ տալիս եմ իմ ձեռքբերածից էժան, ապրանքս ավելի թարմ է էսօր, քան երեկ էր...»: Իրականում պարզապես փող են «շինում»: Եթե կարողանաս ճիշտ նկարագրել այդ լաբիրինթոսը, գուցե մի քանի մարդ խուսափի որոգայթից»:

ՈՐՔԱ՞Ն Է ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Այսօր Հայաստանում սպառողական վարկերը հիմնականում տարեկան 14-20 տոկոսով են, երբեմն՝ ավելի, հիպոթեքային վարկերը՝ միջինը 9-13, բիզնես վարկերը՝ 12-18 տոկոսով: Բայց եթե տնտեսությունը «զարգանում է», բանկերը շահույթ ունեն, Կենտրոնական բանկը նվազեցնում է տոկոսադրույքները, ապա ինչո՞ւ են վարկերն այսքան թանկ: Ֆրանսիայում բնակարանային վարկերը մոտ 2.5-4 տոկոս են, Գերմանիայում՝ 3-4.5 տոկոս: Նույնիսկ սպառողական վարկերը չեն անցնում 6-7 տոկոսը: Եվ պատճառը միայն այն չէ, որ «իրենք հարուստ են, մենք՝ աղքատ»: Հարց է ծագում՝ ինչո՞ւ է տոկոսը Հայաստանում բարձր.

1. Բարձր ռիսկ: Բանկերը վստահ չեն, որ վարկառուն վաղը կունենա կայուն եկամուտ ու անվտանգ միջավայր: Պատերազմ, միգրացիա, տնտեսական ցնցումներ, ստվերային աշխատավարձեր՝ այս ամենը բանկի աչքում մեծացնում է վտանգը: Այդ վտանգը նրանք դնում են տոկոսի մեջ:

2. Վարկերի մեծ պահանջարկ: Հայաստանում մարդիկ վարկ են վերցնում ապրելու, բուժվելու, ուսման, նույնիսկ ամենօրյա ծախսերի համար: Երբ պահանջարկը մեծ է, բանկը չի շտապում էժանացնել փողը: Պարզ տրամաբանություն է. եթե վերցնում են, ինչո՞ւ իջեցնել:

3. Թույլ մրցակցություն: Բանկերը շատ են, բայց շուկան փոքր է: Տոկոսների հարցում իրական մրցակցություն գրեթե չկա: Պայմանները հաճախ միմյանց շատ նման են:

4. Շահույթի մոդելը: Հայաստանի բանկերը հիմնականում գումար են աշխատում հենց վարկերի տոկոսներից, ոչ թե բարդ ներդրումային գործիքներից, ինչպես զարգացած երկրներում է: Տոկոսը նրանց հիմնական եկամտի աղբյուրն է:

Երկրորդ հարցը. սա թալա՞ն է, թե՞ ոչ: Սա այն կետն է, որտեղ զգացմունքը բախվում է տնտեսագիտությանը: Ձեւական առումով՝ բանկերը գործում են օրենքի շրջանակում: Պայմանագրերը ստորագրված են, տոկոսները նշված են, ոչ ոք զենքով չի ստիպում: Բայց սոցիալական առումով՝ երբ մարդը տարիներով աշխատում է միայն տոկոս փակելու համար, երբ վարկը չի օգնում դուրս գալ աղքատությունից, այլ խորացնում է այն, առաջանում է թալանի զգացողություն: Եվ այդ զգացողությունը դատարկ տեղից չի ծնվում:

Ո՞ՒՄ ԵՆ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԲԱՆԿԵՐԸ

Սա կարեւոր, բայց քիչ քննարկվող հարց է: Հայաստանի բանկերի մի մասը պատկանում է տեղական խոշոր գործարարներին, օլիգարխիային, օֆշորային կամ արտասահմանյան կառույցներին, միջազգային ֆինանսական կազմակերպություններին: Այսինքն՝ բանկերը հանրային կառույցներ չեն: Նրանք առաջին հերթին սպասարկում են սեփականատերերի շահը: Սոցիալական արդարությունը նրանց համար առաջնային խնդիր չէ: Հաճախ հարցնում են. եթե այդպես է, ինչո՞ւ պետությունը չի միջամտում: Պատասխանը մեկն է՝ վախ բանկային համակարգի ցնցումից: Եթե պետությունը պարտադրի կտրուկ իջեցնել տոկոսները, բանկերը կարող են կրճատել վարկավորումը, դուրս բերել կապիտալը կամ խստացնել պայմանները: Իսկ դա արդեն կարող է բերել տնտեսական լուրջ հարվածի: Այդ պատճառով պետությունն ընտրում է զգուշավոր լռությունը: Լռություն, որը հասարակության կողմից ընկալվում է որպես անտարբերություն:

Այլ խնդիրներ էլ կան, որոնց մասին քիչ է խոսվում. թաքնված վճարներ, միջնորդավճարներ, բարդ ու ոչ հասկանալի պայմանագրեր, տույժ-տուգանքների խճճված հաշվարկ, վարկային կախվածության խթանում՝ հատկապես երիտասարդների շրջանում: Եվ ստեղծվում է մի համակարգ, որտեղ մարդը հաճախ չի հասկանում, թե ինչ է ստորագրում, եւ միայն տարիներ անց է գիտակցում, թե ինչի մեջ է ընկել: Իրավաբանի լեզվով ասած՝ միշտ չէ, որ կա օրենքի խախտում: Հասարակ մարդու լեզվով ասած՝ վարկի տոկոսը դառնում է կյանքի բեռ, իսկ վարկը՝ ծուղակ: Բայց խնդիրը միայն բանկերի մեջ չէ: Իրենց դերն ունեն թույլ սոցիալական պաշտպանությունը, ցածր աշխատավարձերը, թանկ կյանքը, վարկով ապրելու կարիքը: Քանի դեռ այս շղթան չի կոտրվել, մարդիկ շարունակելու են ասել. «Տոկոսի տակ ենք ընկել», եւ դրանում, ցավոք, մեծ ճշմարտություն կա:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ
Վարչաբեկ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 30.01.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՐԱՆԻՆ ՀԱՐՎԱԾԵԼՈՒ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԵՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Իրանին նոր հարվածներ հասցնելու տարբերակներ է դիտարկում: Այս մասին հայտնում է CNN-ը: Ինչ տարբերակների մասին է խոսքը: Համաձայն հաղորդման, տարբերակներից մեկը, որը քննարկվում է Սպիտակ տան վարչակազմի կողմից, Իսլամական Հանրապետության ղեկավարներին վերացնելու համար Իրանին ավիահարվածներ հասցնելն է: Այս դեպքում՝ թիրախում ինչպես իրանական բարձրագույն ղեկավարությունն է, այնպես էլ անվտանգության ոլորտի պատասխանատուները, որոնց ԱՄՆ-ն պատասխանատու է համարում ցուցարարների սպանությունների համար: Մյուս տարբերակը նախատեսում է ավիահարվածներ Իրանի միջուկային օբյեկտների եւ կառավարական հաստատությունների ուղղությամբ: Հայտնի է, որ նախագահ Թրամփը դեռեւս վերջնական որոշում չի կայացրել, թե որ տարբերակն է կիրառելու Իրանի դեմ, սակայն նա կարծում է, որ գործողությունների «լայն զինանոց» ունի՝ շնորհիվ Մերձավոր Արեւելքում ամերիկյան ռազմական ուժերի կուտակման: CNN-ը նաեւ հայտնում է, որ Թրամփն ընդունում է նոր առաջարկներ՝ Իրանին հարվածելու տարբերակների վերաբերյալ, քանի որ Իսլամական Հանրապետության եւ Միացյալ Նահանգների միջեւ միջուկային եւ հրթիռային ծրագրերի սահմանափակման ուղղությամբ նախնական բանակցություններն արդյունք չեն տվել: Իդեալական է դիտարկվում այնպիսի հզոր հարված հասցնելը, որը կստիպեր Թեհրանին՝ ընդունել Վաշինգտոնի պայմանները եւ համաձայներ գործարք կնքել ըստ ամերիկյան պայմանների: Իրանին հարվածելու հարցում Թրամփն ուզում է, որ արագ հայտարարի հաղթանակի մասին, հակառակ դեպքում կոնֆլիկտը կարող է շարունակվել ու ձգձգվել, ինչը Միացյալ Նահանգների համար ամենեւին էլ ձեռնտու չէ: Սակայն նաեւ Վաշինգտոնում հասկանում են, որ Իրանի զինանոցում կան հակահրթիռային պաշտպանության համակարգեր, բալիստիկ հրթիռներ, դրոններ, կործանիչներ, որոնք էապես կարող են բարդացնել Միացյալ Նահանգների պլանները եւ Ամերիկային ներքաշել հերթական հակամարտության մեջ, որը կարող է ձգձգվել տարիներով:

Ի պատասխան ամերիկյան սպառնալիքների, Իսլամական Հանրապետության ԱԳ նախարար Աբաս Արաղչին սոցկայքի իր էջում հրապարակած գրառմամբ է հանդես եկել: «Իրանական բանակը լիովին պատրաստ է անմիջապես եւ վճռական կերպով պատասխանելու ցանկացած ագրեսիայի՝ օդում, ջրում եւ ցամաքում, իսկ Իսրայելի հետ անցյալ տարվա պատերազմի դասերը թույլ են տալիս սպառնալիքներին ավելի արդյունավետ կերպով հակադարձել»,- ասել է նա: Այս հայտարարությունը, նկատենք, հնչել է Միացյալ Նահանգների կողմից՝ Մերձավոր Արեւելք ռազմական նավատորմ ուղարկելու եւ Իրանի հետ հնարավոր շփման ճակատային գծի ամրացման մասին տեղեկություններից հետո: Արաղչին նաեւ ասել է, որ, այս ամենով հանդերձ, Թեհրանը միշտ կողմնակից է եղել «փոխադարձաբար ձեռնտու, արդարացի եւ իրավահավասար միջուկային գործարքին», եթե գործարքը լինելու է հավասար պայմաններով՝ առանց հարկադրանքի, սպառնալիքների կամ վախեցնելու, որը կերաշխավորի Իրանի միջուկային խաղաղ տեխնոլոգիաների զարգացումը եւ կապահովի միջուկային զենքի բացակայությունը: Արաղչին կրկին շեշտել է, որ Իրանն իր անվտանգության համակարգում միջուկային սպառազինությունների առկայություն չի դիտարկում:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am